16 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1998 ՇԱԲԱԹ # 172 (1675)

Azg Ազգ

Ռաֆֆի Հովհաննիսյանը հրաժեշտ տվեց Հիմնադրամին

Դեռևս նախորդ օրը մեր ստացած տեղեկությունները հաստատվեցին դժբախտաբար. «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Ռաֆֆի Հովհաննիսյանը երեկ իր մոտ հրավիրելով գործադիր վարչության ատենապետներին՝ հրաժեշտ է տվել նրանց եւ այնուհետեւ մեկնել: Ատենապետների հետ զրույցի ընթացքում նա ոչինչ չի ասել հրաժարականի շարժառիթի կամ պատճառների մասին: Ընդհակառակը, նա խոսել է հիմնադրամի հետագա ծրագրերի մասին եւ ատենապետներին հորդորել շարունակել նվիրված աշխատել: Ավելացնենք, որ նախորդ օրը Ռ. Հովհաննիսյանը ատենապետի չէր ներկայացել, թեեւ մեկ օր առաջ ատենապետներին հրավիրել էր ժողովի: Ենթադրվում է, որ այդ օրը նա ծանր ու թեթեւ է արել հրաժարվելու որոշումը:

Կարելի է ենթադրել, որ հիմնադրամի գործադիր տնօրենը հոգաբարձուների խորհրդին կներկայացնի կամ արդեն ներկայացրել է իր հրաժարականը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հին ու նոր ՀՀՇ-ն առաջ է քաշում Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկության հարցը

Նախագահը կարող է բարշրացնել մարտահրավերի շեռնոցը

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

«Հայրենիք» խմբակցության նախագահ Էդվարդ Եգորյանը երեկ հրապարակեց ապստամբական հայտարարություն նշելով, որ սկսում է 96 պատգամավորների աջակցություն ստանալու գործընթացը հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկության հարցը Սահմանադրական դատարանում բարձրացնելու համար: Նախագահին ուղղված մեղադրանքները հայտնի են՝ օրենքները խախտելու վտանգավոր ավանդույթի ամրակայում, տնտեսության մեջ «արմունկի կամ հովանավորյալ խմբերի» ստեղծում, կառավարության դերի աղճատում, «Ներքին գործերի եւ ազգային անվտանգության, պաշտպանության Նախարարություններն են վերածվել կառավարության», «ներքին եւ արտաքին կառավարության մեջ դիլետանտիզմի հաստատում»: Վանո Սիրադեղյանի նետած ձեռնոցը Ռոբերտ Քոչարյանի հրաժարականի վերաբերյալ, այս անգամ փոխանցվեց Էդվարդ Եգորյանին, վերջինս էլ իրեն բնորոշ ճակատայնությամբ ստանձնեց նրան փոխարինողի դերը:

Եթե իրերի դրությանն առավել սթափ հայացքով նայենք, ապա հայտարարությունը փոքրիկ է՝ մի բաժակ ջրում: Հանրապետության նախագահի պաշտոնանկության գործընթացը կարգավորվում է Սահմանադրության 57-րդ հոդվածով, որի համաձայն «ՀՀ նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար: Հանրապետության նախագահի պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացության համար ԱԺ-ն պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ ընտրված որոշմամբ դիմում է ՍԴ: Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը ՍԴ եզրակացության հիման վրա կայացնում է ԱԺ-ն պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով»: Սա է օրենքի տառը, որ նշանակում է «Հայրենիքի» հայտարարության անիրական լինելը: ԱԺում էդ. Եգորյանի խմբին միանշանակ կպաշտպանեն «Հանրապետությունը», ԱԺՄ-ն եւ գուցե «Շամիրամի» որոշ հատվածը, սակայն այս ամենը գումարային առումով 60 պատգամավորից փոքրինչ պակաս է: Իսկ «Երկրապահն» արդեն ունի 77 պատգամավոր:

Տես էջ 2

ԲԱՔՈՒ

Ղոնփակ բանակցություններ

ԲԱՔՈՒ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման ուղիներն են այսօր քննարկվում Բաքվում, որտեղ գտնվում է ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների բանակցությունը: Պատվիրակությունը Քարտուղարությունից ժամանել նախորդ օրը եւ ամբողջ երկուշաբթի օրը եռանդուն, դոնփակ բանակցություններ էր վարել Ադրբեջանի արտգործնախարարությունում:

Այսօր կեսօրին համանախագահները հանդիպում ունեցան նախագահ Հեյդար Ալիեւի հետ: Ամերիկյան համանախագահը, Լին Պասկոյին, որը մեկուկես տարի աշխատել էր Մինսկի խմբում, փոխարինել է դեսպան Դոնալդ Կայզերը: Ռուսական մասի մեջ, որը գլխավորում է համանախագահ Յուրի Յուկալովը, մտցված է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ դեսպան Իգոր Սուդենիկովը: Ֆրանսիան դարձյալ ներկայացնում է ժորժ Վոժիեն:

Ինչպես հայտարարեց Դոնալդ Կայզերը, Մինսկի խումբը լի է վճռականությամբ ազդակ հաղորդելու կարգավորման բանակցություններին:

Ալիեւը ափսոսանք է հայտնել, որ հաշտարար գործընթացում որոշ ընդմիջում էր տեղի ունեցել, ընդգծելով, որ դա չի համապատասխանում Ադրբեջանի ու Հայաստանի ընդհանուր նպատակներին: Նա նշել է, որ իր երկիրը հանդես է գալիս բանակցություններին թափ հաղորդելու օգտին, հույս է հայտնել, որ Մինսկի խմբի նորացված կազմը ի վիճակի կլինի աշխուժացնել հաշտության գործընթացը:

Երբ որ բացվեն դռներն բանտի

Ի նշանավորումն Հայաստանի անկախության յոթնամյակի

Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Սահմանադրության 55-րդ հոդվածի համաձայն, Ազգային ժողովին ներկայացրեց «Հայաստանի 3-րդ հանրապետության անկախության հռչակման 7-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» որոշման նախագիծը: Նիստը դռնփակ էր, բայց բավական բուռն, ինչի վկայությունն արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի պահանջած 20-րոպեանոց ընդմիջումն էր, որի ընթացքում նախարարը հանրապետության նախագահին տեղեկացրեց ԱԺ-ի հանդիպակաց առաջարկությունները. խորհրդարանն այս պարագայում ստանձնեց պահպանողական մոտեցում: Եթե նախագահի, արդարադատության նախարարության եւ ՆԳ, ԱԱ նախարարության նախագծում առաջարկվում էր համաներում տարածել նաեւ բռնաբարության որոշ դեպքերի, ինչպես նաեւ արվամոլության համար հոդվածների դեպքում, ապա ԱԺ-ն ասաց իր ծանրագդեցիկ խոսքը՝ «ո՛չ»: Հանրապետության նախագահը համաձայնեց բռնաբարության համար նախատեսված հոդվածների վրա չտարածել համաներումը, իսկ արվամոլության դեպքում գործեց ժողովրդավարական մոտեցումը. ժամանակն է գիտակցել, որ սեռական փոքրամասնությունների շահերը հավասարազոր են մարդու իրավունքներին եւ զարգացած երկրներում շատ վաղուց դրա համար չեն բանտարկում: ԱԺ-ն առաջարկեց եւ վավերացրեց պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի առաջարկությունը՝ ստեղծելու ժամանակավոր հանձնաժողով՝ բաղկացած ԱԺ խումբ-խմբակցությունների եւ անկախ պատգամավորների մեկական ներկայացուցիչներից, որը կուսումնասիրի համաներման ընթացքը: Ավելի պարզ՝ «փող չաշխատեն եւ չաղավաղեն մարդասիրական նոյտակ հետապնդող այս գործընթացը»: Բացի այդ՝ կառավարությանն առաջարկվեց նախագահի կողմից համաներման նախագիծը վերջնականապես վավերացնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում սահմանել համաներման անցկացման ժամանակացույց՝ ելնելով պատիժների բնույթից:

Դատապարտյալների 15 տոկոսը կազատագրվի, իսկ 5 տոկոսի համար կկրճատվեն պատժաչափերը:

«Ազգին» ասաց արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը.

– Համաներումը կվերաբերի 920 դատապարտյալի, իսկ շուրջ 230-240 անձանց դեռեւս չկրած պատժաչափերը կկրճատվեն, ինչպես նաեւ բազում թեթեւ գործեր կկարճվեն, ուստի հստակ թիվ դեռ դժվար է ասել: Դա կկազմի Հայաստանում դատապարտվածների շուրջ 20 տոկոսը: 15 տոկոսը կազատագրվի, 5 տոկոսի պատժաչափը կկրճատվի: Ցավոք, նախադատապարտված չէ համաներման արժանացող դատապարտյալների սոցիալական ռեաբիլիտացիայի ծրագիր, դա լուրջ, նյութատար եւ աշխատատար գործընթաց է, որը մասամբ ընդգրկված է մեր ծրագրում, ըստ այդմ թեթեւ պատիժներ իրականացնող հիմնարկները հետզհետե անցնում են արդարադատության նախարարության ենթակայությանը: Ցավոք, չկա նաեւ հստակ վիճակագրություն, թե նախորդ համաներումից հետո նախկին դատապարտյալների որ տոկոսն է դարձյալ հանցագործություն կատարել: Այլ երկրներում հանցագործ ճանաչվածների տոկոսը 20-65 է: Հայաստանում պետք է, որ շատ բարձր չլինի: Այս համաներումը տարածվում է ավելի մեծ թվով մարդկանց վրա, քան նախորդները, բայց շատ լուրջ փոփոխություններ, կարծում եմ, չկան:

Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Թեթեւ արդյունաբերության նախկին նախարարը դատապարտվեց 8 տարվա ազատազրկման

ԵՐԵՎԱՆ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արաբկիրի ժողովրդական դատարանում ավարտվեց ՀՀ թեթեւ արդյունաբերության նախկին նախարար Ռուդոլֆ Թեյմուրազյանի եւ «Հայէկոնոմբանկի» վարչության նախկին նախագահ Վլադիմիր Բաղալյանի վերաբերյալ քրեական գործի դատավարությունը: Այս գործը հայտնի է նաեւ որպես «չինական վարկի» գործ: Հիշեցնենք, որ գործով պետությանը հասցվել էր 4 միլիոն 98 հազար դոլարի վնաս, որից նախաքննության ընթացքում վերականգնվել է 1 միլիոն 38 հազար դոլարը, կալանք է դրվել 1 միլիոն 800 հազար դոլարի գույքի վրա, 2 միլիոն 400 հազար ընդհանուր գումարով խաղհայցեր են ներկայացվել շուրջ 20 կազմակերպությունների:

Նախկին նախարարը ՀՀ քրեական օրենսգրքի 90 հոդվածի (գույքի հափշտակումը յուրացնելու, վատնելու կամ պաշտոնեական դիրքը չարաշահելու միջոցով) 4-րդ եւ 182 հոդվածի (իշխանությունը կամ պաշտոնեական դիրքն ի չար գործադրելը) 2-րդ մասերով դատապարտվեց 8 տարվա ազատազրկման՝ անձնական գույքի 50 տոկոսի բռնագրավումով: Նրանից նաեւ պետք է բռնագանձվի 500 հազար դոլար: Բանկի նախկին կառավարիչը 182 հոդվածի 2-րդ մասով դատապարտվեց 4 տարվա ազատազրկման եւ համաներման կիրառումով ազատվեց դատարանի դահլիճից:

Դատապարտված նախարարը, ինչպես ասաց Արաբկիրի ժողովրդական դատավորը, պատրաստվում է բողոքարկել դատավճիռը:

ՄՈՍԿՎԱ

Նիկոլայ Բորդյուժան՝ Անվտանգության խորհրդի քարտուղար, Ալեքսանդր Շոխինը՝ փոխվարչապետ, Դմիտրի Յակուշինը՝ նախագահի մամլո քարտուղար

ՄՈՍԿՎԱ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ. ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Այսօր Ռուսաստանի նախագահի մամլո ծառայությունը տարածել է պետության ղեկավարի հրամանագիրը Նիկոլայ Բորդյուժային ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնում նշանակելու մասին:

Հրամանագիրը ճշտում է, որ Ն.Բորդյուժան ազատվել է Ռուսաստանի Դաշնության Հանձնաժողովի դաշնային ծառայության տնօրենի պաշտոնից:

Դեպուտատների «Մեր տունը Ռուսաստանն է» խմբակցության ղեկավար 46-ամյա Ալեքսանդր Շոխինն այսօր հայտարարել է, որ համաձայն է զբաղեցնել ֆինանսական հարցերը տնօրինող փոխվարչապետի պաշտոնը Եվգենի Պրիմակովի կառավարությունում:

ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցի այն հարցին, թե արդյոք Ալեքսանդր Շոխինը ֆինանսական խնդիրների կարգավորման իր համադրությունն ունի՞, նա պատասխանել է. «Այժմ հենց դրանով եմ զբաղված»:

41-ամյա լրագրող Դմիտրի Յակուշկինը նշանակվել է ՌԴ նախագահի մամլո քարտուղար: Նա այդ պաշտոնում փոխարինել է Սերգեյ Յաստրժեմբսկուն, որն ազատվել է անցած շաբաթվա վերջին «այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ»:

Դմիտրի Յակուշկինը ծնվել է 1957 թվականի փետրվարի 4-ին: Մասնագիտությամբ «միջազգային լրագրող» է: Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի ժուռնալիստիկայի ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատել է «Կոմսոմոլսկայա պրավդայում», այնուհետեւ Մամուլի եւ նորությունների գործակալությունում, գործակալության թղթակիցն է եղել Ֆրանսիայում: Երկար ժամանակ աշխատել է Ռուսաստանի հեռուստատեսությունում, վերջին ամիսներին վարում էր «Մանրամասներ» ծրագիրը:

Ազատ տիրապետում է անգլերենին եւ ֆրանսերենին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՊՄԲԱՑԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Հին-նոր ՀՀԿ-ն առաջ է քաշում Ռոբերտ Քոչարյանի պաշտոնանկության հարցը

Սկիզբը էջ 1

«Հանրապետական» կուսակցության անունից Գալուստ Սահակյանը հրապարակեց իրենց միանձնակ որոշումը՝ միավորվել «Երկրապահ» խմբի հետ, սակայն այս հայտարարությունն ուներ բավական ինքնաթիռ քաղաքական ենթատեքստ: «Հանրապետական» կուսակցությունը, ԱԺ «Երկրապահ» պատգամավորական խումբը, Երկրապահների կամավորական միությունն արձանագրում են հանրապետությունում տնտեսական-սոցիալական անմխիթար վիճակը՝ վերջին շրջանում ծեւավորված դրական միտումներով: «Երկրապահը» սանձնում է իր նախասիրած երրորդ՝ կայունացնող ուժի կարգավիճակը՝ հակամարտող երկու կողմերի միջեւ:

Բաբկեն Արարքցյանը խախտում է լռությունը

«Հանրապետություն» խմբակցության նախագահ Բաբկեն Արարքցյանը քաղաքական տեւական լռությունից հետո, որին ըստ ականատեսների վկայության նախորդել է բանակցային գործընթացն ԱԺ գրեթե բոլոր խմբերի եւ անկախ պատգամավորների հետ, մոտեցավ ԱԺ ամբիոնին եւ հայտարարեց, որ սեպտեմբերի 14-ին՝ 14:30-ին, ՀՀ նախագահը ի խախտումն սահմանադրական հստակ պահանջի՝ չգումարեց ԱԺ արտահերթ նստաշրջան՝ 68 պատգամավորների պահանջով: «Հանրապետություն» խմբակցությունը՝ իբրեւ փոքրամասնություն, առաջին անգամ արձանագրեց իշխանության կողմից խորհրդարանական փոքրամասնության շահերի խախտումը, ինչն անաչառ լինելու համար պետք է արձանագրենք, որ բավական հաճախ է պատահել իրենց իշխանության օրոք: Խմբակցությունը «դատապարտում է Ռոբերտ Քոչարյանի կողմից Սահմանադրությունը ոտնահարելու փաստը եւ գնահատում դա իբրեւ ժողովրդավարության լուրջ խախտում»: Բառացի գրեթե նույնն արձանագրեցին Դավիթ Շահնազարյանը, Վիգեն Խաչատրյանը, Արշակ Սադոյանը, Վահագն Խաչատրյանը:

«Արմենիայի» սեփականաշնորհման խաբկանքը

Պատգամավոր Վահագն Խաչատրյանն անցավ տնտեսական մարտավարության: Նա 100 մլն դոլարի ներդրումների մասին իշխանության պնդումը համարեց կեղծ, քանզի այդ տեղեկատվությունը ամրակայված չէ փաստաթղթերով, այլ միայն գաղտնապահական արտօրինի շրջանում: Արձակուրդների ընթացքում պրն Խաչատրյանը կառավարությունից պահանջել է համապատասխան փաստաթղթեր կենսաթոշակային հիմնադրամի, «Հայկական ավիաուղիների», Արմենտելի, գինու կոմբինատի եւ հյուրանոցների վերաբերյալ, սակայն ստացել է միայն Արմենտելի սեփականաշնորհման գործարքի փաստաթուղթը՝ այն էլ անգլերեն: «Արմենիա» հյուրանոցի վերաբերյալ գործարքի պատշոնական տեղեկությունները Վահագն Խաչատրյանը հերքեց՝ պնդելով, թե պատրաստ է վարչապետի առաջ հիմնավորել, որ հյուրանոցային համալիրը վաճառվել է ոչ 8 մլն դոլարով, այլ 5 մլն-ից ավելի քիչ, իսկ 3 մլն-ը 99 տարվա համար հաշվարկված հողի հարկն է, որը չի կարող գումարվել վաճառքի գնին: Նա զգուշացրեց անսխալականության մոլուցքից:

«Կառավարությունը մեղսակից է վարկերի յուրացմանը»

Պետրոս Մակեյանը 98 թ. հունիսի 10-ին ստեղծված վարկերի արդյունավետությունը ստուգող ժամանակավոր հանձնաժողովի անունից հրապարակեց մի փաստաթուղթ, ուր խստագույն գնահատականներ էին տրված ներկա կառավարությանը: Նա պետական կառույցներին մեղադրեց անպատասխանատու վերաբերմունքի մեջ, նշելով, թե վարկերի մեծ մասը կիրառվել է ոչ նպատակային եւ անարդյունավետ, օրենսդրական խախտումներով: Կառավարությունը, Պետրոս Մակեյանի պնդմամբ, «բոյկոտի քաղաքականություն է վարում եւ խոչընդոտում է ճշմարտության բացահայտմանը», հետեւաբար նա մեղսակից կամ գործակից է վարկերի յուրացմանը: Կառավարությունից պահանջված եւ ցպահանջ փաստաթղթերի շարքում ամենահետաքրքիրը Թուրքմենստանի պարտքը իբրեւ վարկ ձեւակերպելու պայմանագիրն է՝ հիշեցնելով, որ այստեղ շուտափվում են 92-94 թթ. էներգակիրներ ներմուծող կազմակերպություններին առնչվող տվյալներ, իսկ դրանք կարող են լույս սփռել այն անլուծելի հանելուկի վրա, ըստ որի 92-93 թթ. արտադրվել է նույնքան էլեկտրաէներգիա, ինչ այսօր, բայց քաղաքացիներն օրերով խավարի մեջ էին՝ 30 րոպե կամ 1 ժամ լույսի ակնկալիքով: Արշակ Սադոյանը փաստարկեց, թե Թուրքմենստանն առ այսօր այդ վարկի դիմաց մեզանից ստացել է 12 մլն դոլար եւ շարունակվում են Հայաստանի եռամսյակային մուծումները: Նա պահանջեց արտգործնախարարությունից եւ կառավարությունից չեղյալ հայտարարել հիշյալ պայմանագիրը եւ այդ հարցով մտնել ԱԺ:

«Կոնյակի» գործով 64-ից ավելի ստորագրություն հավաքվեց

Դավիթ Շահնազարյանը հավաստեց, որ բավարար թվով ստորագրություններ հավաքվեցին այս գործով արտահերթ նստաշրջան չհրավիրելու նախագահի որոշումը Սահմանադրական դատարան բողոքարկելու համար: «Ազգն» արդեն բերել է զարգացման հնարավոր ընթացքը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածը թույլ է տալիս Գագիկ Հարությունյանին մերժել հայցը:

Ընդդիմությունը միավորվում է եւ փորձում արձակել իր համազարկերը, բայց դրանք օդում հնչող նախագգուշական կրակոց են հիշեցնում: Ռոբերտ Քոչարյանին ձեռնոց են նետում, որը կարող է բարձրացվել՝ անկախ այն հանգամանքից, որ հանրապետության դատախազ Հենրիկ Խաչատրյանը սպանվեց իր աշխատասենյակում՝ նախկին իշխանություններին առնչվող աղմկահարույց սպանությունների վերծանման նախաշեմին:

ԿԸՀ-ն չեղյալ հայտարարեց 45 ընտրատարածքի ընտրությունները

Ամբ ղեկավարությունը պատգամավորների ծնման ներքո երկրորդ անգամ դիմեց ԿԸՀ՝ չեղյալ հայտարարելու իր իսկ նախորդ որոշումը Ալոս Ոսկանյանի՝ թիվ 45 ընտրատարածքում նոր պատգամավորական ընտրություններ կազմակերպելու վերաբերյալ: Ընտրությունների անցկացումը չեղյալ է հայտարարվում, քանզի ըստ Ամբ կանոնակարգի պահանջի՝ պատգամավորի հայտարարությունն իր լիազորությունները վայր դնելու մասին պետք է ավելի վաղ հայտարարված լիներ Ամբ խոսնակի կողմից, բայց որոշեցին Ալոս Ոսկանյանի դիմումները համընկել են ուրբաթների հետ, խորհրդ Հարությունյանն այն կարողացավ հրապարակել միայն սեպտեմբերի 14-ին: 15-օրյա պահանջվող ժամանակից հետո ընտրություններ կազմակերպել ԿԸՀ-ն այլեւս չի կարող, որովհետեւ օրենքը ժամանակային խիստ սահմանափակում ունի:

Ն. Գ.

ԱՍՈՒԼԻՍ

Պ. Հայրիկյանը՝ միջխորհրդարանական վեհաժողովի, Եվրախորհրդի եւ «Եվրասիայի» մասին

ԻՄ, ՀՀ նախագահին առընթեր մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Պարույր Հայրիկյանի հերթական հանդիպումը լրագրողների հետ, որ երեկ տեղի ունեցավ ԻՄ կենտրոնատեղիում, պատմում էր միջխորհրդարանական 100-րդ վեհաժողովին հայկական պատվիրակության եւ կարգավիճակում անձամբ իր մասնակցության մասին (վեհաժողովն անցկացվել է Մոսկվայում՝ սեպտեմբերի 6-12-ը): Հայաստանը վեհաժողովում ներկայացված էր 11 ծայնով, պատվիրակության կազմում ընդգրկված էին ԱԺ 4 պատգամավորներ (այդ թվում նախագահ Խորհրդ Հարությունյանը) եւ օգնականներ: Ըստ պրն Հայրիկյանի, հայկական պատվիրակությունը կատարել է իր հիմնական խնդիրը՝ «անցկացնել» ԱԳՆ-ի հետ համատեղ մշակված բանաձեւի նախագիծը ցեղասպանության կանխարգելման եւ դրա համար նախատեսված պատժի վերաբերյալ դեռեւս մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից առաջ ընդունված բանաձեւի (Ցեղասպանության կոնվենցիայի) 50-ամյակը նշելու: Անարդարացի է, որ մարդու իրավունքների ոտնահարման ամենաբարբարոսական դրսեւորման վերաբերյալ բանաձեւն անտեսվում է համընդհանուր հռչակագրի 50-ամյակին նվիրված միջոցառումների ծիրում, ասաց ԻՄ նախագահը: Այն երկրներին, որոնք դեռեւս չեն միացել Ցեղասպանության կոնվենցիային, նախագիծը, մասնավորապես, կոչ էր անում միանալ ցեղասպանությունը կանխարգելելուն ուղղված փաստաթղթին: Վեհաժողովում խնդրո առարկայի վերաբերյալ ընդունված բանաձեւը, սակայն, Հայրիկյանի կարծիքով, շատ ընդհանուր էր (ընդամենը հիշեցնում ցեղասպանության մասին, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործության):

Լիազումար նիստում պատվիրակությունների համար սահմանված համամասնական ընտրակարգերին՝ առավելություն տալով վերջինիս: Միաժամանակ ռեալիկի կարգով պատասխանել է Ադրբեջանի ներկայացուցչի հակահայ, միջազգային ֆորումներում ավանդական ելույթին, որի հիմքում «Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքի 20 տոկոսի բռնազավթված լինելու» պարագան էր:

Մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահն ի հավելումն մասնակցել է Ռուսաստանի, Ղազախստանի եւ Ուկրաինայի նախաձեռնած միջխորհրդարանական կառույցներից մեկի՝ Եվրասիա միության ձեւավորման գործընթացին (Հայաստանն, ըստ Սանկտ Պետերբուրգում ձեռք բերված պայմանավորվածությունների (ԱՊՀ) 12 երկրներից է, որ անդամակցում են այդ կազմակերպությանը): Բացի այդ, մասնակցելով քրիստոնեա-դեմոկրատների, պահպանողականների եւ այլ ուժերի հանդիպմանը, «շոշափել է» Հայաստանի՝ Եվրախորհրդին անդամակցելու հնարավորությունները: Ըստ նրա, Եվրախորհրդի գլխավոր պատասխանատու Լենի Ֆիշերը, որը հանդիպմանը ներկա էր որպես քրիստոնեա-դեմոկրատ, նշել է Հայաստանի անդամակցության խոչընդոտները՝ ժողովրդավարացում եւ Ղարաբաղի հիմնահարց, որ հարցականի տակ են դնում նաեւ Ադրբեջանի մուտքը Եվրախորհուրդ (Վրաստանի գործերն այդ առումով համեմատաբար բարվոք են): Արդար խորհրդարանական ընտրությունների դեպքում, Հայրիկյանի տպավորությամբ, Հայաստանի հնարավորությունները կարող են բարելավվել:

ԻՄ նախագահը կանգ առավ նաեւ մարդու իրավունքների միջազգային հանձնաժողովի թափուր տեղը համալրելու փորձին: հանդիպման ընթացքում առաջարկված Հայրիկյանի թեկնածությունը պահանջվող 21 ծայնի փոխարեն հավաքել է 13-ը, սակայն այդ արդյունքն էլ կարծես բավարարում է նրան, քանզի առաջադրումը հանպատրաստից էր:

Լրագրողների «նախաձեռնությամբ» ԻՄ նախագահն անդրադարձավ Հայաստանում առկա կամ սպասվող ճգնաժամին: Ըստ նրա, Հայաստանում ճգնաժամն սկիզբ է առել ԱԺ ձեւավորման առաջին իսկ պահից, եւ առաջիկա 2-3 ամսում արտաքոց իրադարձություններ չեն սպասվում: Ինչ-որ ուժեր թերեւս կփորձեն արհեստական ճգնաժամ ստեղծել, բայց Հայրիկյանը դեմ է արհեստական լարվածությանը եւ համարում է, որ բոլոր հարցերը խաղաղ պրիսի լուծվեն: Սակայն Հայաստանի ներկա իշխանությունները պետք է մտածեն խորհրդարանում հենարան ունենալու մասին, գտնում է նա:

ՄԻՐԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Կարեն Դեմիրճյանը վարձակալել է գրասենյակ

«Ազգ» օրաթերթն արդեն անդրադարձել է Սարյան հասցեում Հայաստանի ժողովրդական կուսակցությանը տրամադրված գրասենյակի փաստին: Սակայն ԱԺ պատգամավոր Վոլոդյա Բաղայանը մեզ պարզաբանեց, որ այդ հասցեում ՀԺԿ-ն առայժմ ստիպված է եղել իր միջոցների հաշվին վարձակալել մի քանի սենյակ, որովհետեւ նույն փողոցում իրենց առաջարկված շենքի գիտահետազոտական հաստատության աշխատողները դեռ մտադիր չեն կամովին հեռանալ սեփական տարածքներից: Մասնավորեցման նախարար Պավել Ղալթախչյանը «Ազգին» հայտնեց, թե նախարարությունը, ըստ օրենսդրության պահանջի, սահմանված ժամկետում կլուծի բոլոր վիճելի խնդիրները: Նա ճշեց, թե ՀԺԿ-ն ընդամենը երկու ամիս է, ինչ դիմել է իրենց՝ գրասենյակ ստանալու խնդրանքով, Կոմկուսը եւս հերթում սպասողներից է, ինչպես նաեւ բազմաթիվ այլ հասարակական կազմակերպություններ: Ուստի նախարարությունն առայժմ ենթադրում է հնարավոր բոլոր տարբերակները:

Ն. Գ.

Երեւանում աշխատանքը սկսեց «Հայաստանը եւ քրիստոնյա Արեւելքը» միջազգային գիտաժողովը

ԵՐԵՎԱՆ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՄՆԱՐՔ: Այսօր Երեւանում Գիտությունների ազգային ակադեմիայում աշխատանքը սկսեց «Հայաստանը եւ քրիստոնյա Արեւելքը» միջազգային գիտաժողովը, որի աշխատանքներին մասնակցում են Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, ԱՄՆ-ից, Իտալիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից եւ Ճապոնիայից ժամանած ավելի քան 30 հայտնի հայագետներ: Գիտաժողովն անց է կացվում Հայաստանի կողմից քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում:

Գիտաժողովի նախաձեռնողը այդ հոբելյանի անցկացման պետական հանձնաժողովն է՝ ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանի գլխավորությամբ, իսկ կազմակերպիչը՝ Գիտությունների ակադեմիան ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի, Մատենադարանի եւ Երեւանի պետական համալսարանի հետ համատեղ:

Գիտաժողովի ընթացքում, որը կշարունակվի մինչեւ սեպտեմբերի 19-ը, կքննարկվեն եկեղեցու եւ պետության փոխհարաբերությունները, գրչության, ճարտարապետության եւ արվեստի պատմությունը եւ այլ հարցեր:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը եւ Հայաստանի վարչապետ Արմեն Դարբինյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության է տարի
Հիմնադիր եւ խմբագիր
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԲԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
հանձնակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յողովը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

տեղեկատվություն

ԵՐԵՎԱՆ

Միջազգային համաժողով՝ նվիրված Սպիտակի երկրաշարժին

Եվ սեյսմիկ ռիսկի նվազեցման հարցերին

Երեկ Հայաստանի ամերիկյան համալսարանում մեկնարկեց «Սեյսմիկ վտանգ, սեյսմիկ ռիսկի նվազեցում» երկրորդ միջազգային համաժողովը՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի տասնամյակին: Ներկայացուցչական այս միջոցառումը, որին մասնակցում են աշխարհի մոտ 40 երկրների ավելի քան 340 ներկայացուցիչներ, նախաձեռնել են ՀՀ կառավարությունը, հանձին ԱՊՀԾ ոլորտի աշխատանքները, բացի գլխավոր կազմակերպիչներից, հովանավորում են աշխարհի ամենաշարբեր երկրների խոշորագույն պետական ինստիտուտներ եւ գիտահետազոտական կենտրոններ, միջազգային կազմակերպություններ եւ մասնավոր անձինք, մասնակցում են երկրաշարժաբաններ, գեոֆիզիկոսներ, երկրաբաններ, ճարտարապետներ, հոգեբաններ, գործարար եւ օրենսդիր ժողով

ԱԶԳ

դրսից

Տնտեսական ծանր վիճակում անգամ չպետք է խնայել կրթության հաշվին

Անցումային այս բարդ փուլում կրթական համակարգը՝ հասարակական կառուցվածքի կարեւոր եւ ծավալուն բաղադրիչներից մեկը, բնականաբար, պետք է ենթարկվեր համապատասխան փոփոխությունների: Սակայն հայտնի է նաեւ, որ այն օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ, կայունությամբ, եւ «հեղափոխական» առաջընթացի փորձերը կարող են հակադարձ ազդեցություն ունենալ ու բացասաբար անդրադառնալ սերնդի մտավոր եւ հոգեկան զարգացման վրա:

Տնտեսական խաղաղակենության սխալների ճնշող մեծամասնության հետեւանքներն արագ են ի հայտ գալիս եւ ակներեւ են: Ցավոք, կրթական համակարգի կառավարման բնագավառում թույլ տրված սխալների հետեւանքները հաճախ մնում են թաքնված, դժվարությամբ եւ ուշացումով են բացահայտվում: Հա՞րկ է արդյոք մեծ փորձություններ ենթարկել այդ ահռելի համակարգը, մեծ եւ փոքր ծավալի հաճախակի ռեֆորմներ իրականացնել: Այլ երկրներում անգամ փոքր ռեֆորմների ծրագրերը հիմնվում են սոցիալ-հոգեբանական, սոցիոլոգիական, մանկավարժական, տնտեսագիտական եւ այլ գիտական ծանրակշիռ հետազոտությունների վրա եւ անցնում բազմամյա փորձաշրջանի բովով: Իսկ Հայաստանում վերջին չորս տարում չորս նախարար ունեցանք, եւ բոլոր նախարարները հանդես եկան ցեֆորմներով, հաճախ՝ իրարամերժ: Ինչ խոսք, համակարգը պետք է փոփոխությունների ենթարկվի, համապատասխանի արդի պայմաններին, սակայն փոփոխման ծրագրերը պետք է հիմնվեն գիտական բազմակողմանի ուսումնասիրությունների տվյալների վրա եւ նախապես փորձարկվեն:

Վերջին տարիներին, հիմնական ուշադրությունն ուղղելով համակարգի կառուցվածքային փոփոխություններին, դասագրքերի, որոշ մեթոդական աշխատանքներին, կարծես աչքաթող է արվում կադրային հարցը: Իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը բարձր չի լինի, եթե ապահովված չլինեն որակյալ ուսուցչական կադրերով:

Անցած 10 տարում հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորողների ընդհանուր թվաքանակի աճ չի նկատվում: Բազմաթնույթ եզրահանգումների տանող տխուր փաստ է: Էական տարբերություններ են նկատվում քաղաքային եւ գյուղական բնակավայրերի հանրակրթական դպրոցներում սովորողների թվաքանակի աճի տեմպերի միջեւ: Ուրախալի է, որ 1988-89 եւ 1997-98 ուսումնական տարիների ընթացքում գյուղական բնակավայրերում սովորողների թիվն աճել է շուրջ 40 հազարով: Սակայն քաղաքային բնակավայրերում տեղի է ունեցել անկում շուրջ 41 հազարով: Երեւանում 1984-85 ուս. տարվա 177,7 հազար աշակերտների թիվը 1997-98 ուս. տարում իջել է 156 հազարի: Այդ ժամանակահատվածում աճել է ուսուցիչների թիվը՝ 50 հազարից հասնելով 60 հազարի: Ուսուցչական կազմում որոշ փոփոխություններ են կատարվել: Ավելացել է կին ուսուցիչների քանակը՝ 72 տոկոսից հասնելով շուրջ 73 տոկոսի:

Անհանգստություն է պատճառում ուսուցիչների կրթական մակարդակի անկումը: Եթե 1988-89 թթ. ուսուցիչների 83,2 տոկոսն ուներ բարձրագույն կրթություն, ապա 1997-98 թթ. 78,2 տոկոսը: Այս ընթացքում բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչների կորուստն ավելի մեծ է գյուղական բնակավայրերում՝ համապատասխանաբար 74,6 տոկոս եւ 68,5 տոկոս: Ուսուցիչների կրթական մակարդակը, թերեւս, կրթական համակարգի գործունեության կարեւորագույն ցուցանիշներից է եւ կարելի է ենթադրել, որ հատկապես գյուղական բնակավայրերում սովորողների գիտելիքների մակարդակի անկման միտումներ կարձանագրվեն:

Գիտելիքների ձեռքբերման ավանդական այլ ձեւերի հետ մեկտեղ հանրապետությունում լայն տարածում ունի նաեւ արտադպրոցական, վճարովի ուսուցումը: Բարձր դասարաններում, հատկապես բուհ ընդունվել ցանկացողների մեջ այդպիսի պարապմունքները 1970-80-ական թվականներին արդեն տարածված էին, սակայն այժմ համարյա համընդհանուր տարածում են ստացել: Տագնապ է հարուցում, որ այդ երեւույթն ասիճանաբար արմատներ է գցում նաեւ ցածր եւ միջին դասարաններում: Դրա առկայությունը, բացի այլ գործոններից, ոչ սակավ չափով է պայմանավորվում նաեւ ուսուցչի սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակը փոքր-ինչ թեթեւացնելու դրդապատճառով: Ի դեպ, արտադասարանական վճարովի կրթության ազդեցությունը դպրոցական ուսուցման վրա խիստ հրատապ սոցիալ-հոգեբանական եւ մանկավարժական ուսումնասիրությունների կարիք ունի, քանի որ կարող է մեծ ազդեցություն գործել դպրոցում խմբային դինամիկայի՝ աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ, ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-ղեկավար եւ այլ հարաբերությունների, դասարանում եւ այլ միջավայրերում աշակերտների գործունեության եւ շատ այլ ոլորտների վրա: Սակայն երեւույթի դրական կամ բացասական կողմերը կարող են բացահայտվել հետագա գիտական հետազոտությունների միջոցով:

Ուսուցման այս ձեւը, որը փոքր-ինչ կմեղմեր իրավիճակը, այսօր գյուղական միջավայրերում եթե անգամ տարածվի, էական արդյունք չի կարող տալ որակյալ ուսուցիչների, հատկապես դասվարների ցածր կրթական մակարդակի պատճառով:

Մեզ թվում է, որ հիմնական ուղին է ստեղծել նյութական պայմաններ բարձրակարգ ուսուցիչների հոսքը գյուղ ապահովելու համար: Այս խնդիրը ծառացած էր նաեւ խորհրդային ժամանակաշրջանում: Այն ժամանակ բազմաթիվ ձեւեր էին կիրառվում խնդիրը լուծելու համար՝ պարտադիրից մինչեւ խրախուսականը:

Այսօր, սակայն, մի կողմից, ժողովրդավարական օրենքներն են օրակարգից հանում շատ ձեւերի կիրառումը, մյուս կողմից՝ հանրապետության ծանր տնտեսական, հատկապես ֆինանսական հնարավորությունները: Որպես ելք, թերեւս կարելի էր փորձել ձերբազատվել կենտրոնացված վճարման համակարգից: Կառավարության կողմից հատատված ուսուցիչների դրույքաչափերը, որոնք միայն բավականացնում են հաց գնելուն, խիստ կաշկանդում են տեղական ինքնակառավարման մարմիններին՝ աշխատավարձի միջոցով ուսուցիչներին գյուղ ներգրավելու գործում: Պետք է հնարավորություն տալ համայնքներին ինքնուրույն որոշելու ուսուցիչների աշխատավարձը, ելնելով տեղական խնդիրներից, նպաստավոր իրավական, հատկապես հարկային դաշտ ստեղծել այն հատատությունների համար, որոնք միջոցներ կհատկացնեն գյուղական բնակավայրերի ուսուցիչների աշխատավարձի ֆոնդին:

Խնդիրը խիստ կարեւոր է այն պատճառով, որ եթե տասը տարի առաջ գյուղական հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը կազմում էր հանրապետության աշակերտների թվի 33 տոկոսը, ապա այժմ այդ թիվը հասել է 40-ի: Եթե դրան ավելացնենք նաեւ այն, որ այդ նույն ժամանակահատվածում բուհ ընդունվողների թիվը 11000-ից հասել է մոտ 15000-ի, ապա էլ ավելի ցայտուն կդառնա խնդրի կարեւորությունը:

Այսօր կրթության եւ գիտության առջեւ ծառացած բարդ խնդիրների հիմնական պատճառը հանրապետության տնտեսական ծանր վիճակն է: Սակայն հարկ է խնայողություն չանել եւ ելք փնտրել բնագավառի զարգացման համար: Այլապես մենք կունենանք լավագույն դեպքում ներմուծվող, 10, 20 տարվա վաղեմության «առաջավոր» գիտության եւ տեխնիկայի սպասարկող անձնակազմ, ոչինչ չտալով քաղաքակրթության զարգացմանը:

ՌՈՒԲԵՆ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
Երեւանի քաղաքապետարանի «Մշակույթ» ՊՈԲԸ սոցիալական հետազոտ. բաժնի վարիչ

Միջազգային սեմինար. «Համաշխարհային ժառանգություն» կրթության ծրագիր

Սեպտեմբերի 8-11-ը գրողների միության Ծաղկաձորի հանգստյան տանը Յունեսկոյի ասոցիացված դպրոցների ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ միջազգային սեմինար նվիրված «Համաշխարհային ժառանգություն» կրթական ծրագրի հարցերին: Սեմինարի նպատակը ԱԳՀ երկրների տարածաշրջանում եւ մասնավորապես Հայաստանում ծրագրի ներկայացման, իրագործման եւ զարգացման հեռանկարների ուսումնասիրությունն էր, պատմամշակութային հուշարձանների եւ մշակութային օբյեկտների պահպանման եւ բարելավման ծրագրերին դպրոցականների մասնակցության ապահովումը, ինչպես նաեւ հանրակրթական դպրոցներում սովորողներին համաշխարհային պատմամշակութային ժառանգությանը ծանոթացնելը:

Հայաստանի Յունեսկոյի գործերով ազգային հանձնաժողովի անունից սեմինարին մասնակցելու էին հրավիրվել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի՝ Յունեսկոյի ասոցիացված դպրոցների ծրագրի անդամ դպրոցների (21) տնօրենները, ինչպես նաեւ ծրագրի համակարգողներ եւ անդամ դպրոցների տնօրենները Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից:

Սեմինարը բացեցին Հայաստանի Յունեսկոյի գործերով ազգային հանձնաժողովի քարտուղար Վարդուհի Աստուրյանը եւ Յունեսկոյի ասոցիացված դպրոցների ծրագրի համակարգման բաժանմունքի ներկայացուցիչ Տարո Կոմացուն: Սեմինարի մասնակիցներին ողջունեցին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության միջնակարգ կրթության վարչության պետ Արա Ավետիսյանը, Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ Սիլվա Խրիմյանը:

Առաջին նիստում, որը նախագահում էր Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Գայանե Մուսայելյանը, «Համաշխարհային ժառանգություն» կրթական ծրագրի շրջանակներում զեկուցումներով հանդես եկան Յունեսկոյի ասոցիացված դպրոցների ծրագրի Հայաստանի համակարգող, Ազգային միավորված եւ ասոցիացված դպրոցների միության նախագահ Արա Հովսեփյանը, Արա Ավետիսյանը, ՀՀ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության պետ Վարդան Մկրտչյանը:

«Համաշխարհային ժառանգություն» կրթական ծրագրի հիմնադրույթներին մանրամասնորեն ծանոթացրեց Տարո Կոմացուն:

Նախագահող Գ. Մուսայելյանը, հմտորեն ընթացք տալով զեկուցողների առանձին տեսանեսներին, ստեղծեց քննարկման մթնոլորտ՝ դպրոցների տնօրենների մասնակցությամբ: Սեմինարի 2-րդ օրվա նիստում իրենց կարծիքները, առաջարկությունները ներկայացրին Հայաստանի, Ուկրաինայի, Վրաստանի դպրոցների տնօրենները:

Պարզվեց, որ «Համաշխարհային ժառանգություն» կրթական ծրագրի իրագործումը հնարավոր է առաջին հերթին ծրագրի մանրամասն ուսումնասիրություններից հետո: Առաջարկվեց մշակել գործողությունների ազգային ծրագիր, կրթական ծրագիրը ներմուծել հանրակրթական դպրոցների ծրագրի մեջ, որը կնպաստի դպրոցականներին համաշխարհային պատմամշակութային հուշարձաններին եւ արժեքներին ծանոթացնելուն, ստեղծել դասագրքեր, տեսաֆիլմեր, ամսագրեր նվիրված համաշխարհային պատմամշակութային ժառանգությանը, կազմակերպել դասավանդող անձնակազմի վերապատրաստում ԱԳՀ-ի շրջանակներում:

Արվեցին ուրիշ շատ առաջարկություններ, որոնց իրագործման հնարավորությունները պարզաբանեցին նախարարության եւ Երեւան քաղաքի կրթության բաժինների պետերը: Նախագահող Գ. Մուսայելյանը որքան էլ ջանում էր, որ դպրոցների տնօրենները չշեղվեն սեմինարի հիմնական թեմայից, առանձին հարցերի համար ամենաթանկ «համաշխարհային ժառանգությունը» իրենց դպրոցներն էին, եւ նորից ու նորից խոսակցություն էր բացվում դպրոցների տանիքների վերանորոգման, շրջակա տարածքի բարեկարգման, դպրոցական նոր գույքի, համակարգիչների ձեռքբերման անհրաժեշտության եւ այլ խնդիրների մասին, դրանց իրագործումն ապավինելով պրն Ավետիսյանին եւ տկն Խրիմյանին:

Սեմինարի երրորդ օրը կազմակերպվեց մասնակիցների այց Յունեսկոյի ասոցիացված դպրոցների ծրագրի անդամ Երեւանի թիվ 169 եւ 176 դպրոցներ:

Եզրափակիչ խոսքով սեմինարը փակեց Տարո Կոմացուն, որը շնորհակալություն հայտնեց սեմինարի ղեկավարներին, մասնակիցներին եւ մեծ վստահություն՝ Հայաստանում «Համաշխարհային ժառանգություն» կրթական ծրագրի իրագործման վերաբերյալ:

ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Երեւանի թիվ 20 դպրոց Յունեսկոյի ԱԳՀ անդամ

ԱԽՍԼՔԱԼՔ

Եվ ուրախություն, եւ տրտմություն

Սկսելով նոր ուսումնական տարին, Ախալքալաքի շրջանի 69 հանրակրթական դպրոցների 14.000 աշակերտները եւ ուսուցիչները ակնկալում են, որ առաջիկա մի քանի ամիսների ընթացքում որոշակիորեն կվերացվեն իրենց դպրոցներում տեղ գտած թերությունները, բացերը: Ամառային արձակուրդի ընթացքում հնարավոր չեղավ ամեն ինչ ավարտին հասցնել: Այնուհանդերձ, արդեն 10 դպրոցներ, այդ թվում՝ Ազավրեթի, Տուրցխի, Գոմանի, Սուլդայի, Կոկիայի, Դիլիսկայի, ենթարկվել են մասնակի վերանորոգման, իսկ Կարզախում եւ Չոնչխայում հին դպրոցաշենքերից գրեթե ոչինչ չի մնացել:

Բացի Վրաստանի Հանրապետության համապատասխան մարմիններից, ինչպես միշտ, Ախալքալաքի շրջանի կրթական համակարգում տեղ գտած հիմնախնդիրների լուծման գործում շնորհալի նախաձեռնություն ցուցաբերեց Հայաստանի կրթության եւ գիտության նախարարությունը, ինչպես նաեւ հատուկ ծրագրերի վարչությունը:

Երախտագիտություն հայտնելով հիշյալ գերատեսչությունների ղեկավարներին, որոնք շրջանի դպրոցներին անվճար տրամադրեցին ոչ միայն դասագրքեր, այլեւ շինանյութեր (20 տոննա ցեմենտ, 10 տ գաջ, 400 կգ ներկ, 2.000 քմ առակի, 500 շիֆեր), շրջանի կրթության բաժնի վարիչ Կամո Սնխչյանը նշեց, որ առանց օգնության դժվար թե հնարավոր լիներ որոշ դպրոցներում ուսումնական տարին սկսել սեպտեմբերի 1-ից: Այնուհանդերձ, պարոն Սնխչյանի ուրախությունը կամաց-կամաց փոխվեց... «լացի», որովհետեւ դպրոցները ապահովված չեն համապատասխան կադրերով, 3-6 առանձին գյուղերում նույնիսկ 7 ամիս է, ինչ մանկավարժները աշխատավարձ չեն ստացել: Մեղքի բաժին ունեն գյուղական վարչությունների նախագահները, որոնք ժամանակին չկարողացան ժողովրդից հավաքել տուրքերն ու հարկերը:

Եվս մեկ հիմնախնդիր: Մոտենում է ձմեռը, որը, ինչպես հայտնի է, Ջավախքում տեւում է 6-7 ամիս: Վառելիք կունենա՞ն դպրոցները:

– Եթե կառավարությունը, շրջանի ղեկավարությունը չկարողանան մեզ օգնել, ստիպված կլինենք դիմել Հայաստանի օգնությանը, ասում է կրթության բաժնի վարիչը: Հակառակ դեպքում կկիրառենք անցած տարիների փորձը՝ յուրաքանչյուր դասարան (ծնողների օգնությամբ) ինքը կհոգա դասասենյակը տաքացնելու եւ պարապմունքները ձմռան ամիսներին կանոնավոր անցկացնելու խնդիրը:

Այնուհետեւ պրն Սնխչյանը ափսոսանք հայտնեց, որ Մոսկվայում, Ռուսաստանի տարբեր քաղաքներում, նաեւ Ախալքալաքում հիշ չեն տեղացի մեծահարուստները, գործարարները, որոնք ոչ մի նյութական օգնություն չեն փորձում ցույց տալ գոնե այն դպրոցներին, որտեղ իրենք են սովորել: Իսկ առանձին մարդիկ աղմկում են, թե իբր հայ երեխաների հոսքը ռուսական դպրոց շատացել է: Սա անհիմն դժգոհություն է համարում պրն Սնխչյանը, նշելով, որ քաղաքի միակ ռուսական դպրոցը մի քանի տարի առաջ ուներ 1700 աշակերտ, իսկ հիմա՝ 700. միշտ եւ միշտ հակառակը:

Կամո Սնխչյանը հարթում է նաեւ այն հերյուրանքները, բյուրիմացությունները, թե իբր Վրաստանի կառավարությունը հրաման է արձակել, որ ոչ մի ռուսական դպրոցներում տեղ գտած հոսքերի, թերությունների, խնդիրների լուծման գործընթացը:

ՌԱՖԱԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երեւան-Ախալքալաք

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՕԱՐԻՁ

Ժակ Շիրակ. «Միտերանը նպաստել է աջ ծայրահեղականների հզորացմանը»

Ֆրանսիայի ՆԳ նախարար Ժ-Պ Շեւենմանի առաջինման, 1998 թ. բյուջեի թեժ քննարկումների, աջ թեւի նոր խմորումների կողին եւս մի իրադարձություն է հուզում ֆրանսիական մամուլին՝ Ժակ Շիրակի հարցազրույցը իր եւ Միտերանի հարաբերությունների վերաբերյալ: Այն տպագրվել է Միտերանի կենսագրությանը նվիրված Ժ. Լակուսյուրի գրքի հավելվածում: Ֆրանսիական մամուլն այս հարցազրույցը որակեց իբրեւ «1996-ի հունվարին արտասանած ճառի ճգրտումներ»:

Ժակ Շիրակը հայտարարում է, որ Միտերանը նպաստել է աջ ծայրահեղականների՝ Ազգային ճակատի հզորացմանը, որպեսզի աջերին հարվածի մեջքից: Ինչ վերաբերում է 1986-88 թթ. համակեցությանը, այն հեշտ չէր: «Միտերանը ամեն ինչ բարձրացնում էր ինտելեկտուալ մակարդակի: Նրա պատկերացումը Ֆրանսիայի մասին խիստ գաղափարային էր, փոքր-ինչ ցինիկ: Նա սիրում էր Ֆրանսիան մտքով եւ ոչ զգացմունքով: Եթե խորությամբ նայենք, նա Ֆրանսիայի հետ վարվեց այնպես, ինչպես մարդիկ վարվում են շատ սիրած պատկերի հետ, այսինքն՝ արգելեց որեւէ փոփոխություն»:

«Մենք անկեղծ զրույցներ էինք ունենում, շարունակում է Շիրակը, բայց միշտ տարբեր հարթություններ էին: Նա լավ էր ճանաչում Ֆրանսիան, բայց ոչ աշխարհը»: Ինչ վերաբերում է միջազգային կոնֆերանսներին, առա Շիրակին հաճախ զայրացնում էին իր «ռեֆի» երկար ճառերը, որոնք երբեք չէին հասնում բուն թեմային:

Հ. Գ. Սեպտեմբերի 10-ին Ելիսեյան պալատը հրապարակեց մի փաստաթուղթ, որում ասված է. «Հանրապետության նախագահը զարմանքով հայտնեց, որ իր եւ Ժ. Լակուսյուրի միջեւ մի քանի ամիս առաջ տեղի ունեցած զրույցը վերածվել է հարցազրույցի՝ առանց նախագահին զգուշացնելու եւ իր հետ խորհրդակցելու: Դրա հետեւանքով առաջացել են մոտավոր ձեւակերպումներ եւ անճշտություններ»:

Կոնկորդի հրապարակը՝ հեշտոտին

Կոնկորդի հրապարակը, որը Փարիզի ամենամեծ հրապարակն է եւ նրա խորհրդանիշը, կորցնում է իր պաշտամական եւ ճարտարապետական արժեքը, վերածվելով ծանր երթեւեկության նվազման եւ հեշտոտն տարածքի ավելացման ծրագիրը: Փարիզի քաղաքապետ Ժան Տիբերին հայտնի է իբրեւ շրջակա միջավայրի պահպանման եւ Սենայի ափերի բարեկարգման ջատագով: Հնարավոր է, որ մոտ ապագայում երթեւեկությունը 20 տոկոսով կրճատվի, իսկ մայթերը ընդլայնվեն 50 տոկոսով:

Կոնկորդի հրապարակը Փարիզի պատմության վկան է: Այն գտնվում է Շանզելիզեի եւ Տյուիլրի պարտեզի միջեւ: Լուի-Ֆիլիպը այս հրապարակում կանգնեցրեց Ֆրանսիայի քաղաքները խորհրդանշող արձաններ, իսկ Նապոլեոնը՝ Լուքսորի սյունը:

1793 թ. այստեղ գլխատվեց Լյուդովիկոս 16-ը:

ԻՌԵՆ ՍԱՌՈՅԱՆ
Փարիզ

Օգոստոսի 31-ին, երբ Ուոլ Սթրիթում՝ Նյու Յորքի բանկերի ու սակարաններ փոողոցում, Դոու Ջոնսի ցուցիչը իջավ 500 կետով, հասնելով 7539-ի, ամերիկյան բազմաթիվ հեռուստաալիքների ֆինանսական մեկնաբանները մոտալուտ աղետ էին կանխագուշակում: Հենց նույն օրը CNN

ԱՄՆ

Ուոլ Սթրիթի «բարի փերին»

հեռուստաալիքով ելույթ ունենալով, «Գոլդմեն Սեյս» բանկի ռազմավարության տնօրեն տիկին էրի Քոհենը ամերիկացիներին հանգիստ պարզաբանում էր, որ սակարաններում սկիզբ առած վախի, անորոշության, կասկածի եւ հուսալքության տրամադրությունները հարուցում են տնտեսական անկում, բայց զուրկ են որեւէ տրամաբանությունից: Հարկավոր է նկատել փաստերը, ուսումնասիրել երկրի տնտեսության եւ ձեռնարկությունների վիճակը, որպեսզի հնարավոր լինի խուսափել անտեղի հոռետեսությունից, պնդում էր նա: Ի տարբերություն իր մյուս գործընկերների, այդ օրը էրի Քոհենը ամերիկացիներին խոստացավ, որ մինչեւ տարեվերջ Դոու Ջոնսի ցուցիչը կբարձրանա, հասնելով 9300 կետի: Ամերիկացի միլիոնավոր հեռուստադիտողներ թեթեւացած շունչ քաշեցին, քանի որ էրի Քոհենը համարվում է սակարանների լավագույն մասնագետը եւ վերջին ութ տարիներին իր կանխատեսումներում երբեք չի սխալվել: Նրան երբեմն անվանում են «լավատեսության փերի»:

Ներկայումս սակարանների իրավիճակին առնչվող կանխատեսումներում մասնագետները մեծապես հավի են առնում էրի Քոհենի տեսակետները: Ըստ որում շատերը ենթադրում են, որ նա ոչ միայն կարողանում է ստույգ կանխատեսել բորսայական փոխարժեքների բարձրացումը, այլեւ կանխորոշել դրանք: Բոստոնի սակարաններից մեկի ներդրումների գլխավոր տնօրեն Մայք Ֆոգելզանգը «Էքսպրես» հանդեսի էջերում նույնիսկ հետեւյալ միտքն է հայտնում. «եթե էրի Քոհենը փոխեր տեսակետը եւ սակարաններում արժեքների անկում կանխատեսեր, ապա շուկան կհետեւեր նրան»: Էրի Քոհենի ժողովրդականությունը կապված է ոչ միայն նրա ստույգ կանխատեսումների, այլեւ արտաքին նկարագրի հետ. նրա հագուստը եւ սանրվածքը բնորոշ են ամերիկյան միջին խավին, որը հանգիստ է իր ապագայի համար: Նրա ծնողները լեհ տարագիրներ



էին, երկուսն էլ հաշվապահներ եւ ժառանգ աշխատողներ: 46-ամյա էրի Քոհենը մինչեւ օրս հրաժարվում է երթեւեկել իր բանկի կողմից տրամադրվող ծառայողական ավտոմեքենայով: Ամեն առավոտ նա աշխատանքի է մեկնում ավտոբուսով: Նա մշակել է սակարանային ցուցիչների սեփական համակարգ, որը մասնագետները չափազանց բարձր են գնահատում: 1996 թ. վերջերին, երբ շուկաներ էին ոտքի հանվում Դոու Ջոնսի ցուցիչի առաջիկա անկման վերաբերյալ, տնտեսագիտության դոկտորի կոչում ունեցող վերլուծաբանները տագնապահար սպասում էին ընդամենը դասախոսի կոչում ունեցող էրի Քոհենի հեղինակավոր կանխատեսմանը: Նա կանխագուշակեց բորսայական արժեքների բարձրացում: Եվ ընդամենը 2 ժամվա ընթացքում Ուոլ Սթրիթում Դոու Ջոնսի ցուցիչը բարձրացավ 35 կետով:

Պ. Ք.

ՌՈՒՍԱՍՏԱՆ

«ԱՄՆ-ը պետք է ամեն ինչ անի Ռուսաստանին զորավիգ լինելու համար»

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Միացյալ Նահանգները պետք է ամեն ինչ անի Ռուսաստանի համար վճռական պահին նրան օժանդակություն ցույց տալու համար: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այդ մասին հայտարարել է ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը, ելույթ ունենալով Նյու Յորքի միջազգային հարաբերությունների խորհրդում:

«Ռուսաստանը հայտնվել է տնտեսական ճգնաժամի դեմ հանդիման, որն սպառնում է զրոյական նշագծից սկսած նոր հասարակարգ կառուցելու գործում այն ամբողջ զարմանալի առաջընթացին, որին ռուս ժողովրդին հաջողվեց հասնել ընդամենը 7 տարվա ընթացքում»,- ընդգծել է Սպիտակ տան տերը:

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին եւ Ռուսաստանի կառավարության նոր նախագահ Եվգենի Պրիմակովին «վիճակված է լուծել մեր ժամանակի ամենավիթխարի խնդիրներից մեկը», հայտարարել է Բիլ Քլինթոնը: «Դեռ երբեք ավելի կարեւոր պահ չէր եղել մատնանշելու ապագայի հստակ ուղղությունը, հաստատելու Ռուսաստանի հավատարմությունը ժողովրդավարությանն ու ազատ շուկային եւ վճռական քայլեր ձեռնարկելու տնտեսության կայունացման եւ ներդրողների վստահության վերականգնման նպատակով,- շարունակել է նա: Բայց եթե Ռուսաստանը պատրաստ է դիմելու այդ քայլերին, ապա մենք պետք է հնարավոր ամեն բան անենք նրան զորավիգ լինելու համար»:

Այս շաբաթ տեղի կունենա «Եվրամիության եռյակի» հանդիպումը Եվգենի Պրիմակովի հետ

ՄՈՍԿՎԱ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մինչեւ այս շաբաթվա վերջը Մոսկվայում արտգործնախարարների մակարդակով տեղի կունենա «Եվրամիության եռյակի» հանդիպումը Ռուսաստանի վարչապետ Եվգենի Պրիմակովի հետ:

Ինչպես ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին այսօր հայտնել են կառավարության տեղեկատվության վարչությունում, այս հանդիպման շուրջ պայմանավորվածությունը ձեռք է բերվել հինգշաբթի երեկոյան Ավստրիայի արտգործնախարար Վոլֆգանգ Շյուսելի հետ Եվգենի Պրիմակովի հեռախոսազրույցի ընթացքում:

Ավստրիան ներկայումս Եվրամիության նախագահ երկիրն է:

Քրեական գործ «Տրանսնեֆտի» ղեկավարների դեմ

ՄՈՍԿՎԱ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Տրանսնեֆտի» ղեկավարների ապօրինի գործողություններն ընկերության սեփականաշնորհման եւ 1997 թվականի շահաբաժինների բաշխման ընթացքում հաստատվեցին. հարուցվել է քրեական գործ: Ինչպես այսօր ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել են Ռուսաստանի գլխավոր դատախազությունում, «1998 թվականի մարտին գլխավոր դատախազությունում ստացվել է հիշյալ ընկերության աշխատողների դիմումը» եւ ստուգման ընթացքում պարզվել, որ «ընկերության նախկին նախագահը եւ նրա տեղակալները «Տրանսնեֆտի» տարածքային ստորաբաժանումների ղեկավարների միջոցով ընկերությանն միջոցներով 70-հազարանոց կոլեկտիվից «գնել են» գրեթե բոլոր արժեթղթերը եւ հանձնել այն ֆիրմաներին, որտեղ իրենք սեփականատերեր են»:

1997 թվականին ընկերության աշխատանքի արդյունքներով տնօրենի բաժնեբոնուսների փաթեթին որոնք շահաբաժին հաշվեկշռվել է 133 կրկն չվերանվանված ռուբլի, մինչդեռ պետական փաթեթին՝ կիսով չափ պակաս: Եվ դա այն դեպքում, երբ պետությանը եռակի շատ արժեթղթեր են պատկանում, քան «Տրանսնեֆտի» ղեկավար աշխատողներին:

Ճապոնիային մտահոգում է հյուսիս-կորեական հրթիռային սպառնալիքը

ՏՈԿԻՈ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ճապոնիայի կառավարությանը լրջորեն մտահոգում է Հյուսիսային Կորեայից բխող հրթիռային սպառնալիքը, որը դիտվում է որպես «հիմնախնդիր ամբողջ Հյուսիսարեւելյան Ասիայի համար»: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այս մասին ասվում է վարչապետ Կեյզո Օբուտիի ուղերձում, որը երկրի կառավարող Լիբերալ-դեմոկրատական կուսակցության արտաքին հարաբերությունների գծով խորհրդի ղեկավար Տարո Նակամայան երկուշաբթի օրը Վաշինգտոնում հանձնել է ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթին:

ԳՈՎԱԶԴ

Ֆիրմաներն սկսել են դիմել անհատին

Հագուստ, կոշիկ եւ պերճանքի առարկաներ արտադրող խոշոր ֆիրմաները վերջերս իրենց գովազդային արշավների ընթացքում ավելի ու ավելի հաճախ են օգտագործում այնպիսի կարգախոսներ, որոնք հավանական նազան հորդորներ ու կոչեր են: Եվրոպական քաղաքների փողոցները հեղեղված են հրամայական եղանակով, եզակի երկրորդ դեմքով կազմված այսպիսի գովազդներով. «Դարձիր այն, ինչ կաս», «Խենթ եղիր, խելացի եղիր, ինքնուրույն եղիր» եւ այլն: «Լասկոս», «Հյուգո Բոսս», «Կալվին Քլայն» ֆիրմաները հիրավի էկզիստենցիալիստական խորհուրդներ են տալիս, որոնք արդեն դարձել են յուրօրինակ 11-րդ պատվիրան: Այս ոգով արված թերեւս առաջին գովազդը պատկանում է «Էփլ» համակարգչային ֆիրմային, որը հորդորում էր «Մտածե՛ք այլ ձեւով»:

Նախկինում ֆիրմաները բավարարվում էին նրանով, որ մարդկանց խնդրում էին գնել իրենց արտադրանքը: Մինչդեռ այսօր հաճախորդին կոչ են անում «բարձրանալ» այն արտադրանքի մակարդակին, որը «բարեհաճում են» վաճառել նրան: Այս կապակցությամբ առեւտրական խորհրդատու Պասկալ Վեյլը «Էքսպրես» հանդեսում հետեւյալ միտքն է արտահայտում «իրենց արտադրանքի տեսականին ներկայացնելու փոխարեն խոշոր ֆիրմաները նկարագրում են մի երեւակայական երկիր եւ փորձում են հաղորդակցվել նույն մտայնությամբ»:

Կոկորդիլոսի նշանով կարճաթեւ վերնաշապիկներ արտադրող հանրահայտ «Լակոստ» ֆիրմայի նոր գովազդների վրա պատկերված են ցցի վրա մեկ ոտքով կանգնած փողհար, անդունդի եզրին ջութակ նվագող կամ լճի մեջտեղում գրամեքենան ուսից կախած մարդ, որի կողքին գրված է. «Դարձիր այն, ինչ կաս»: Երկսեռ հաճախորդների համար օծանելիք արտադրող «Կալվին Քլայնը» իր գովազդային արշավը կառուցում է երկիմաստության եւ հակասական ուղերձների վրա, որոնք անդադար հաջորդում են իրար Ռիշար Ավդոնի լուսանկարների ֆոնի վրա. «Լավ եղիր, վատ եղիր, ինչ նման եղիր», «Գեղուհի եղիր, հրեշ եղիր, ինչ նման եղիր»; «Գործուն եղիր, երազող եղիր, ինչ նման եղիր» եւ այլն:

Անորոշ ու տարտամ հորդորների ասպարեզում առաջնության դափնին պատկանում է «Հյուգո Բոսսին», որի «Մի՛ ընդօրինակե՛ք, նոլագրե՛ք» կարգախոսի բառացի ընկալման դեպքում կարելի է մերժել ամեն ինչ, այդ թվում նաեւ իր արտադրանքը: Հոգեբաններն այդ հորդորը համեմատում են «Մի՛ լսիր, թե ինչ եմ ասում» անհեթեթ կոչի հետ: Իրականում խոշոր ֆիրմաների գովազդային հորդորները հեռու են Սոկրատեսի «Ծանի՛ր զքեզ» հայտնի խրատից եւ զուտ առեւտրային նպատակներ ունեն:

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

Երանց ծափահարեց նաեւ... Շերեմետեւոյի օդանավակայանը

Մոսկվայի Շերեմետեւո միջազգային օդանավակայանից զանգահարեց եղբորս դոդրոցահասակ աղջիկը եւ ասաց, որ Իտալիայից վերադառնալու ճանապարհին ինքնաթիռի չվերթը մի քանի ժամով հետաձգվել է: Պայմանավորվեցինք հանդիպել տեղում: Մտնելով օդանավակայանի սպասասրահ, ականջիս հայկական երաժշտության ձայներ լսվեցին: Չլինի՞ հոգեպարար «ռաբիսը» այստեղ էլ է թափանցել հուսահատ մտածեցի ես: Բայց ոչ դասական հայկական պարեղանակ էր... Մոտենալով շուրջբոլոր կանգնած մարդկանց, ինչ եմ տեսնում. սեւաչ հայ տղաներն ու աղջիկներն ափսույժ պարում են, եւ գրեթե ողջ սպասասրահը ռիթմիկ ծափահարում է նրանց: Երգն ու պարը հաջորդում էին միմյանց այնքան ժամանակ, մինչեւ որ միկրոֆոնից նրանց չհրավիրեցին երեւանյան թռիչքի: Բայց «հանդիսականները» հասցրին նրանց պարգեւել կոնֆետներ, խաղողավենիք եւ այլն...

Պարզվեց, որ Շերեմետեւոյում մի քանի ժամով «հանգրվանել» էր օժտված հայ երաժիշտ երեխաների մի խումբ, որոնք Իտալիայի տարբեր քաղաքներում ներկայացրել էր հայ արվեստը: Օդանավակայանում սպասումի ծանձրույթը փարատելու համար երեխաներից մեկը շտապեց էտալոն էր սուել կիթառը եւ սկսել երգել ժողովրդական մի երգ: Անմիջապես հավաքվել էին սպասասրահում գտնվող եւ այլ ազգի մեջ, ոչ միայն թվով հայրենիքից կտրված հայաստանցի հայեր: Հետեւել էին խնդրանքներ, պատվերներ, եւ սպասվել էր հանդիսատեսից համերգ, որի հանդիսականներն էին դարձել «բազմազգ ու բազմագործ» ուղեւորները: Ես էլ նրանց հետ:

Այստեղ էլ ծանոթացա խմբի ղեկավար, մանկապատանեկան ստեղծագործության զարգացման մշակութային միության նախագահ Վարդան Վարդանյանի հետ: Հասցրինք թեթեւակի խոսել նրա նորաստեղծ կազմակերպության գործունեության, շրջագրերի մասին: Պայմանավորվեցինք թեման հանգամանորեն «արծարծել» Երեւանում:

Հայաստանում ամեն անգամ հանդիպելով Վարդան Վարդանյանի նման մարդկանց հետ, մեծ հարգանքով ես լցվում նրանց նկատմամբ: Այս խոսքերը թող չհնչեն որպես շաբլոն պաթետիկա: Տնտեսական ծանր վիճակում գտնվող երկրում եթե մարդը ձեռնարկում է հասարակական գործունեություն՝ չակնկալելով ոչ միայն դրամական հատուցում, այլեւ, հույսը դնելով գերազանցապես իր ու Աստծո վրա, հիրավի արժանի է հարգանքի:

– Ես երեք երեխա ունեմ,- ասում է Վարդանը: -Սաածում էի, ինչպես անեմ, որ նրանք սահմանափակ չլինեն իրենց դասիարակությամբ, մտածելակերպով, ինտելեկտով, կարողանան գոնե երբեմն-երբեմն դուրս գալ մեր պարփակված հայկական միջավայրից: Հետո մտածում եմ՝ իսկ ինչո՞ւ միայն իմ երեխաները: Ինձ ամիս առաջ ստեղծեցի մանկապատանեկան ստեղծագործության զարգացման մշակութային միություն հասարակական կազմակերպությունը:

Հիմնադրելը թերեւս ամենահեշտն էր, գրոյից գործի անցնելը ամենադժվարը: Այն էլ կազմալուծված երկրում: Վարդանյանը սկսեց հասարակական դպրոցներում, մշակույթի օրանոցում, ոչնչի՝ փնտրել երաժշտական «թեւոնով» օժտված երեխաների, կազմակերպել յուրօրինակ երաժշտական-պարային խմբեր եւ ուղեւորություններ մեկնել այլ երկրներ երեխաների համար հնարավորություն ստեղծելով դրսում ներկայացնելու հայ արվեստը, միաժամանակ ծանոթանալով ուրիշների մշակույթին: Առաջինը նրանց հյուրընկալեցին Ռուսաստանի հարավի հայաբնակ քաղաքները: Հովանավորի բացակայության պայմաններում Վարդանյանին օժանդակում էին երեխաների ծնողները, տեղերի հայ համայնքները, Հայ եկեղեցու թեմը: Հետո նրան հաջողվեց կազմակերպել առաջին «իսկական» արտասահմանյան ուղեւորությունը Իտալիա:

– Այդ այցն ինձ շատ ոգեւորեց,- ասում է Վարդանը: -48 հոգանոց մեր խմբին մեծ-օգնություն ցույց տվեցին Հայաստանում Իտալիայի հյուպատոս Անտոնիո Սոնտալդոն, Իտալիայում Մխիթարյան միաբանությունը: Երեխաները հիացած էին:

Միությունն արդեն կարող է հաստատել աշխարհի մոտ 30 երկրների մշակութային կազմակերպությունների հետ: Սկսվել են Անգլիա ուղեւորվելու նախապատրաստական աշխատանքները: Բայց Վարդանյանը հիմնական ուշադրությունը կենտրոնացրել է Մալաբայի վրա: Բանն այն է, որ դիկտեմբերի երկրորդ կեսին այդ երկրում անցկացվելու է միջազգային ազգագրական փառատոն, եւ այնտեղ արդեն համաձայնել են Հայաստանից ընդունելու 60 հոգանոց խումբ: Հրավերներ կան Հոնկոնգից, Իսրայելից, Հոլանդիայից եւ այլն:

– Սեփական ուժերին աղավինելը լավ է, բայց չէր խանգարի նվիրյալ հովանավոր ունենալ,- ասում է խմբի ղեկավարը: -Երբ ձեռնարկում էի այս գործը, ավելի շատ մտածում էի «ինչ անելու» մասին, քան թե «ինչով անելու»: Բայց եթե ուզում ես մասշտաբ ստեղծել, առանց հովանավորի չի սացվի: Որոնումների մեջ եմ:

Հաջողություն մաղթենք Վարդան Վարդանյանին իր «որոնումներում»: Մի բան կասկած չի հարուցում, երեխաները կհատուցեն հովանավորին իրենց արվեստով: Իսկ ո՞վ ասաց, թե դա շահ չէ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա-Երեւան

Ալին Քուքանը մրցանակակիր

Նոնրեալաբնակ սոպրանո Ալին Քուքանը ձայների ջախջախիչ մեծամասնությամբ արժանացել է Կանադայի երիտասարդ կատարողների ժոզեֆ Ռուլո մրցանակին, որը ներառում է 1.ինգ հազար դոլարի դրամական պարգեւ եւ Ֆլորիդայի գրանդ օպերայի դերակատարման ստուդիայում

վերապատրաստվելու կրթաթոշակ: Ալին վաղ Քուքանը հաղթող էր ճանաչվել Նյու Յորքի Ջորջ Լոնդոն մրցույթում, հաղորդում է «Արմինյն Միութեթյթր» շաբաթաթերթը:

ԵՐԵՎԱՆ

«Կեմ» համույթը վերսկսում է իր համերգները քանգարանում

«Կեմ» կամերային երաժշտության համույթը ստեղծվել է 1980 թ., հանրապետության գեղագիտական դաստիարակության կենտրոնում, Ֆլեյտահար Արմեն Ղուկասյանի նախաձեռնությամբ եւ Հենրիկ Իգիթյանի անմիջական աջակցությամբ: Համույթը բազմաթիվ ելույթներ է ունեցել Խորհրդային Միությունում եւ արտասահմանում, 1981 թ. մասնակցել է անսամբլային երաժշտության անդրկովկասյան մրցույթին արժանանալով առաջին մրցանակի եւ դափնեկրի կոչման:

Շուրջ 8 տարի (1980 թ.-ից), եռաբաթ ու կիրակի օրերին, «Կեմ» համույթը ելույթներ է ունեցել ժամանակակից արվեստի քանգարանում: 1988 թ. հետո հանրապետությունում ստեղծված ծանր ցնցումների պատճառով համույթի համերգային գործունեությունը ընդհատվեց:

Սեպտեմբերի 12-ին մանկական պատկերասրահում Արմեն Ղուկասյանի (ֆլեյտա), Կոնստանտին Խաչատուրյանի (կլավեսին) եւ Արամ Թալալյանի (թավջութակ) կատարմամբ հնչեցին Կոմիտասի, Մոցարտի, Բախի, Հենդելի եւ Տելեմանի ստեղծագործությունները: Այս համերգն ընդհատված ավանդույթը վերականգնելու սկիզբն է: Այսուհետեւ յուրաքանչյուր կիրակի մանկական պատկերասրահում (Աբովյան 13)-ում դաշտասարահում (Արովյան 13)-ում դաշտասարահում կարող են ունկնդրել «Կեմ» համույթի համերգները:

«Թանգարանը համարում եմ այն դաշտը, որտեղ համածուլվում են տարբեր արվեստները, ասաց Արմեն Ղուկասյանը: Հին ավանդույթը ցանկանում ենք վերականգնել մանկական պատկերասրահում: Մտադիր ենք համերգներ կազմակերպել նաեւ այլ թանգարաններում ու համերգային դահլիճներում: Թանգարանում երաժշտությունն այլ կերպ է ընկալվում, համերգային դահլիճում այլ: Այս տարում միահյուսվում են կերպարվեստը, երաժշտությունը եւ քանդակը»:

Արվեստագետները հոգեւոր բավարարվածություն են զգում մարդկանց գեղագիտական հաճույք պատճառելով, եւ բնական էր Արմեն Ղուկասյանի պատասխանը. «Նվագում ենք մեր մարդկային եւ մասնագիտական կերպը պահելու համար: Պատրաստ ենք նվագել անվճար, կնվագենք նաեւ մեկ հոգու համար»:

Ա. Ա.

ՆՈՐ ԳԻՐՔ

Արժեքավոր հրատարակություն

Արմենակ Շահմուրադյանի ծննդյան 120-ամյակի առթիվ

Ընթերցողի սեղանին է դրվել հիշարժան մի ժողովածու, որը հրատարակել է Գրականության եւ արվեստի թանգարանը: Հայ մեծանուն երգիչ Արմենակ Շահմուրադյանին, որին իրավամբ Տարոնի Սոխակ էին անվանում, նվիրված առաջին գիրքն է սա, որ ընդգրկում է երգչի ինքնակենսագրությունը, մի հոդվածը, նամականին: Ընթերցողին, անշուշտ, հետաքրքրական կլինի ծանոթանալ Արմենակ Շահմուրադյանի մասին հայ մտավորականների հայտնած կարծիքներին եւ ժամանակակիցների հիշողություններին: Այս բոլորանվեր ժողովածուն կազմողն է՝ հայ երաժշտարվեստի երախտավորներին նվիրված իր հրատարակումներով «Ազգի» ընթերցողին ծանոթ Խաչիկ Սաֆարյանը, իսկ խմբագիրը՝ եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Հենրիկ Բախչինյանը: Թե՛ մասնագետներին, թե՛ հայ երգի երկրպագուներին, թե՛ լայն ընթերցողին գրավող այս ժողովածուն հարուստ է փաստագրական գրաֆիկական նյութով, բացվում է Գրականության եւ արվեստի թանգարանի կողմից զետեղված նախաբանով, որում մասնավորապես ասվում է, որ Արմենակ Շահմուրադյանը հայ դասական վոկալ արվեստի խոշորագույն ներկայացուցիչ է, որ Փարիզի օպերային թատրոնում բացառիկ հաջողության է արժանացել: Սակայն շուտով թողնելով միջազգային ասպարեզը, անմնացորդ նվիրվել է հայ ժողովրդական եւ հոգեւոր երգի տարածմանը, իր ինքնահատուկ մեկնաբանմամբ նորովի շունչ ու լիցք հաղորդելով դրան, օտարամուտ տարրերից մաքրելով շատ նմուշներ, հատկապես ժողովրդական երգի ոլորտում: Անհերքելի է, որ Արմենակ Շահմուրադյանի մեկնաբանմամբ ու կատարմամբ հայ հոգեւոր եւ ժողովրդական երգերը աշխարհին ներկայացան որոշ դեպքերում առավել զտված եւ փայլեցին իրենց ինքնատիպ հմայքով: Եվ ցավալի է, որ այսօր այդ մեծանուն եւ ազգանվեր երգչի անունը գրեթե մոռացության է մատնված եւ այլեւս, նոր սերնդին նրա անունը գերիշխող պարագաներում պարզապես անծանոթ է, բացի բացառությամբ Հայաստանի ռադիոյով հազվադեպ հնչող նրա մի քանի ձայնագրություններից, երգչին հաղորդակցվելու, նրա անունը ճանաչելու եւ հիշելու ոչ մի այլ միջոց չկա: Մինչդեռ մեծ արվեստագետի անուրանալի վաստակը եւ նրա ծննդյան 120-ամյակը ինքնին հուշում են նորովի ոգեկոչելու նրա պայծառ հիշատակը: Նշելի է, որ այս երախտարժան գործին ձեռնամուխ է եղել եղիշե Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանը, երգչին նվիրված իր մի շարք ուշագրավ ձեռնարկումներով: Նախ, թանգարանը կազմակերպեց Արմենակ Շահմուրադյանին նվիրված հոբելյանական ցերեկույթ եւ ցուցադրություն, որին հաջորդեց հիշյալ ժողովածուի հրատարակումը: Խաչիկ Սաֆարյանի պրոֆեսիոնալ ջանքերի շնորհիվ պեղվեցին եւ ի մի բերվեցին Արմենակ Շահմուրադյանին վերաբերող փաստագրական արժեքավոր նյութեր Գրականության եւ արվեստի թանգարանում, Պետական արխիվում եւ Ազգային գրադարանում: Արմենակ Շահմուրադյանի ինքնակենսագրության՝ ժողովածուում զետեղված ընդարձակ տարբերակն ընդհանրապես առաջին անգամ է տպագրվում: Ինքնակենսագրությանը հաջորդում են երգչի մի տպագիր հոդվածը եւ մի շարք հետաքրքրաշարժ, անտիպ նամակներ՝ գրված Արշակ Չոպանյանին եւ մի շարք այլ անձանց: Գրքի ոչ պակաս ուշագրավ բաժինն ընդգրկում է ֆրանսիական եւ եգիպտական ֆրանսալեզու մամուլի գնահատականները՝ հայ մեծանուն երգչին, եւ նրա համերգային հյուրախաղերի վերաբերյալ ժամանակի հայ մամուլի արձագանքները, հուշերը:

Գրականության եւ արվեստի թանգարանը առաջաբանում հիշեցնում է ընթերցողին, որ, թեպետ «Թանգարանի հրատարակչության որդեգրած սկզբունքն է նյութերը հրատարակել բնագրային ուղղագրությամբ, սակայն տվյալ դեպքում ընդունելով կազմողի այն նկատառումը, թե սույն հատորի հիմնական հասցեատերը Հայաստանի ընթերցողն է, բոլոր բնագրերը հրատարակում ենք, այսպես ասած, արդի հայաստանյան ուղղագրությամբ»:

Ծանոթանալով գրքի կազմողի՝ Խաչիկ Սաֆարյանի, «Ազգի» խմբագրությանը ընծայած ժողովածուին, ավելորդ չենք համարում շեշտել, որ խնդրո առարկա հատորը, որ, փաստորեն հայ մեծանուն երգչի կյանքին եւ գործունեությանը նվիրված առաջին հրատարակությունն է, հույժ կարեւոր եւ հետաքրքիր տվյալներ եւ մանրամասներ կարող է հաղորդել թե՛ մասնագետներին, թե՛ երաժշտասեր լայն հանրությանը, մեկտեղ հիմք եւ ազդակ հանդիսանալով տակավին ըստ արժանվույն չգնահատված այս եւ մի շարք այլ հայ մեծանուն երաժիշտների մասին մենագրություններ գրելու եւ հրատարակելու ազգանվեր գործում:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հույսի կամուրջներ

Սեպտեմբերի 11-ին Երեւանի կամերային թատրոնում «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության հաշմանդամ երեխաների շարժական թատրոնը բեմադրեց «Գեղեցկուհին եւ հրեշը» հեքիաթը:

«Արտաքին տգեղությունն ու չարությունն անզոր են հոգու գեղեցկության եւ բարության դիմաց», ներկայացման գլխավոր միտքը հնչում է շրջանների շուրթերից, ովքեր, ինչպես իրենց բոլոր հասակակիցները, ձգտում են լավ ու բարի վերջաբան ունեցող հեքիաթներին:

«Լուսին» հյուրանոցի տարածքում գործող «Հույսի կամուրջ» կազմակերպությունը ստեղծվել է 1997 թ.: Կազմակերպության ուսումնական կենտրոնի եւ թատրոնի հովանավորներն են Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատունը եւ անգլիական OXFAM կազմակերպությունը:

Ներկայացումը, որ բեմականացվեց կազմակերպության նախագահ Սուսաննա Թադեւոսյանի եւ բեմադրող ռեժիսոր Հասմիկ Չախոյանի երկարատեւ աշխատանքի շնորհիվ, հաշմանդամ երեխաների թատերական շնորհը, նրանց հնարավորությունները բացահայտելու մի փորձ էր: Ուշադիր վերաբերմունքի, հոգատարության ու մարդասիրության շնորհիվ հաշմանդամ երեխան նույնպես կարող է ազատ ու անկաշկանդ բեմ դուրս գալ, խաղալ: Հաշմանդամ երեխաները պետք է մեզ հետ լինեն: Նրանց չպետք է կարեկցել կամ խղճալ, այլ օգնության ձեռք մեկնել: Միայն կարեկցելով հասարակությունը ցույց է տալիս, որ հենց ինքն է հաշմանդամ: Գուցե հենց ավելորդ խղճահարությունը, որպես թերարժեք մարդու վերաբերվելն է երեխային օտարացնում, իոգեպես մեկուսացնում հասարակայնությունից: «Հույսի կամուրջ» կազմակերպության նպատակն է չսահմանազատել հաշմանդամ երեխաներին մյուսներից եւ նրանց հասակակիցների հետ շփվելու, սովորելու, իրենց տաղանդն ու ընդունակությունները լիարժեքորեն բացահայտելու, առանց հոգեկան բարդույթներ ստանալու հնարավորություն տալ:

ԹԱԳՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Հետամնաց են առաջատարներին

Եվրոպայի մինչեւ 20 տարեկան պատանիների եւ աղջիկների առաջնությունում անցկացվեց հերթական 10-րդ տուրը:

Տղաների մրցաշարի առաջատարները՝ ռուսաստանցիներ Ալեքսանդր Մոտիլյովն ու Ալեքսեյ Իլյուշինը հանդիպեցին միմյանց հետ եւ առանց դժվարության խաղաղ դաշն կնքեցին: Երեւանցի Լեւոն Առնյանը հաղթեց Դավիթ Հարությունյանին (Վրաստան), իսկ Անդրանիկ Մաշիկոզյանը՝ Ալեքսանդր Մոիսեենկոյին (Ուկրաինա):

10-րդ տուրից հետո Մոտիլյովն ու Իլյուշինը 7,5-ական միավորով շարունակում են գլխավորել աղջիկները: Առնյանն ու Մաշիկոզյանը նրանցից հետ են մնում կես միավորով: Մաշիկոզյանը, Միխայիլ Մչեդլիշվիլին (Վրաստան) ու Միլեն Վասիլեւը (Բուլղարիա) լրացրեցին միջազգային վարպետի նորման: Սա Անդրանիկի երկրորդ նորման է եւ եթե նրան հաջողվի այն կատարել նաեւ ամբողջ մրցաշարի արդյունքով (13 տուրից), ապա այդ կոչումը ստանալու բոլոր անհրաժեշտ պայմանները լրացված կլինեն:

Աղջիկների մրցաշարում կրկին միանձնյա առաջատար դարձավ Սոֆիո Թկեշելաշվիլին (Վրաստան), որը հաղթեց Նելլի Աղինյանին (Հայաստան): Ռուսուդան Գոլեթիանին ոչ-ոքի խաղաց Լիլե Ծալուղելաշվիլու, իսկ Լելա Ջավախիշվիլին (երեքն էլ՝ Վրաստան)՝ մեր Լիլիթ Մկրտչյանի հետ: Անգլուհի Իովանկա Հաուսկան հաղթեց գրոսմայստեր Իոաննա Դվորակովսկային (Լեհաստան)՝ դրանով իսկ կատարելով կանանց միջազգային վարպետի նորման:

10-րդ տուրից հետո Թկեշելաշվիլին ունի 8, Գոլեթիանին՝ 7,5, իսկ Հաուսկան՝ 7 միավոր: Հայաստանի շախմատիստուհիներից լավագույն արդյունքը Մկրտչյանինն է՝ 6 միավոր:

ՄՈԻՍԵԵՆԿՈ-ՄԱՏԻԿՈԶՅԱՆ

Ուկրաինա — Հայաստան

1.d4 ♘f6 2.c4 g6 3.♘c3 ♗g7 4.e4 0-0 5.♗e3 d6 6.f3 ♘c6 7.♘ge2 a6 8.♕d2 ♖b8 9.h4 b5 10.h5 ♘a5 11.♘g3 ♘c4 12.♗c4 bc4 13.0-0-0 c6 14.♗h6 ♕a5 15.♗g7 ♔g7 16.hg6 fg6 17.♕h6 ♔g8 18.f4 ♗g4 19.e5



19...♖b2 20.♔b2 ♖b8 21.♔c2 ♗d1 22.♖d1 ♘g4 23.♕h3 ♘e3 24.♔d2 ♖b2 0-1

ՀՇԿՏ-ում ավարտվեց ռեյթինգ-մրցաշարը վարպետների մասնակցությամբ: Չկրելով ոչ մի պարտություն 9 հնարավորից 7 միավորով առաջին տեղը գրավեց միջազգային վարպետ Ասոն Նադանյանը: 2-4-րդ տեղերը 5,5-ական միավորով բաժանեցին կանանց միջազգային վարպետ Գոհար Հլղաթյանը, ՖԻԴԵ-ի վարպետ Դավիթ Պետրոսյանն ու Վարդան Դանիելյանը:

ԱՐՄԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Միջազգային կարգի մրցավար

Վարուժան Հակոբյան

ՈՒԵՆՅՈՒ

Հայաստան-Շվեդիա՝ 8-8

Երեւանի «Էրեբունի» հյուրանոցում ընկերական մրցախաղ անցկացրեցին Հայաստանի եւ Շվեդիայի ռենձյուի հավաքականները, որոնցից յուրաքանչյուրի կազմում 4 մարզիկ էր հանդես գալիս:

Չորս շրջանով անցկացված մրցումներն ավարտվեցին հավասար՝ 8-8 հաշվով: Մեր թիմի կազմում մասնակցեցին գրոսմայստեր Ալբերտ Պողոսյանը, Միհր Մանուկյանը, Արմեն Ստեփանյանը, Հովհաննես Գեւորգյանը (նրան այնուհետեւ փոխարինեցին Միհր Թումանյանը եւ Ալեքսեյ Կոբզեւը): Մրցակիցները բավականին ուժեղ ռենձյուիստներով էին հանդես գալիս՝ գրոսմայստեր Ստեֆան Կաալսոն, փորձառու վարպետներ Պետեր Յոնսոն, Անդերս Բերտիլսոն եւ Բենգտ Ասպլունդ: Հիանալի հանդես եկավ Հայաստանի հավաքականի առաջատար Ալբերտ Պողոսյանը: Նա առաջին խաղատախտակի վրա 4-0 հաշվով հաղթեց Ստեֆան Կաալսոնին, որը համաշխարհային դասակարգման ցուցակում 14-րդն է (Պողոսյանն այդ ցուցակում համարյա 10 աստիճանով ետ է իր մրցակցից): Երկրորդ խաղատախտակի վրա ոչ-ոքի (2-2) գրանցվեց, իսկ հաջորդ երկուսում շվեդներն իրենց թիմին 3-ական միավոր բերեցին՝ 1-ական միավոր «գիջելով» մեր ռենձյուիստներին:

Այս մրցախաղին այժմ հաջորդել է միջազգային մրցաշարը, որը նույնպես անցկացվում է «Էրեբունի» հյուրանոցում: Հայաստանի 20 եւ Շվեդիայի 4 ռենձյուիստները պայքարում են շվեյցարական մրցակարգով, 7 տուրով ընթացող մրցաշարում: Այն կավարտվի վաղը՝ սեպտեմբերի 17-ին:

ՖՈՒՏԲՈԼ

Դասաեւի հրաժեշտի խաղերը

Նախատեսվում է, որ Մոսկվայի «Սպարտակ» թիմի եւ Խորհրդային Միության հավաքականի հանրահայտ դարպասապահ Ռինատ Դասաեւի հրաժեշտի խաղերը կանցկացվեն սեպտեմբերի 23-ին եւ 26-ին:

Դասաեւը, որը շուրջ 10 տարի գտնվում էր Իսպանիայում, մի քանի ամիս առաջ է վերադարձել Ռուսաստան: Դարպասապահի կարիերան Իսպանիայում փաստորեն չստացվեց: Իսկ վերջին շրջանում Դասաեւը զբաղվում էր բիզնեսով, որտեղ նույնպես հաջողություն չունեցավ: Չախողվեց նաեւ նրա անձնական կյանքը, հետեւեցին ընտանեկան գժտությունները: Ռինատին համոզեցին վերադառնալ նրա եղբայրը եւ ընկերները: Այժմ Դասաեւը Մոսկվայի «Սպարտակում» պարապում է դարպասապահների հետ:

Հրաժեշտի խաղերում կհանդիպեն «աստղերի» հավաքականը եւ Ռուսաստանի ակումբների հավաքականը: «Աստղերը» հանդես կգան ԽՍՀՄ-ի հավաքականի մարզահագուստով, այդ թիմի մարզիչը Նիկիտա Սիմոնյանն է: Նրանց մրցակիցների մարզիչը Վլադիմիր Սալկովն է:

Խաղերից առաջինը տեղի կունենա Մոսկվայում, երկրորդը՝ Աստրախանում, որտեղ իր ֆուտբոլային առաջին քայլերն է արել, որտեղ «Վոլգար» թիմի կազմում հանդես է եկել Ռինատ Դասաեւը:

Նոր մարզիչներ հավաքականներում

Հայտնի է դարձել, որ վերջերս Գերմանիայի հավաքականի հրաժարական տված գլխավոր մարզիչ Բերտի Ֆոգտսին փոխարինելու է 61-ամյա Էրիխ Ռիբբեկը: Նա վերջին տարիներին մարզել է «Բավարիա», «Բայեր», «Կայզերսլաուտերն» թիմերը, որոնք նրա ղեկավարությամբ նկատելի հաջողությունների են հասել: Հավաքականի ղեկը ստանձնելու առիթով Ռիբբեկին ողջունել է նաեւ ԳԴՀ-ի կանցլեր Հելմուտ Քոլը, հույս հայտնելով, որ Գերմանիային նոր հաղթանակներ են սպասում:

Բուլղարիայի հավաքականի գլխավոր մարզիչ Խրիստո Բոնեւին, որը հավաքականի առաջատար Ալբերտ Պողոսյանը: Նա առաջին խաղատախտակի վրա 4-0 հաշվով հաղթեց Ստեֆան Կաալսոնին, որը համաշխարհային դասակարգման ցուցակում 14-րդն է (Պողոսյանն այդ ցուցակում համարյա 10 աստիճանով ետ է իր մրցակցից): Երկրորդ խաղատախտակի վրա ոչ-ոքի (2-2) գրանցվեց, իսկ հաջորդ երկուսում շվեդներն իրենց թիմին 3-ական միավոր բերեցին՝ 1-ական միավոր «գիջելով» մեր ռենձյուիստներին:

Այս մրցախաղին այժմ հաջորդել է միջազգային մրցաշարը, որը նույնպես անցկացվում է «Էրեբունի» հյուրանոցում: Հայաստանի 20 եւ Շվեդիայի 4 ռենձյուիստները պայքարում են շվեյցարական մրցակարգով, 7 տուրով ընթացող մրցաշարում: Այն կավարտվի վաղը՝ սեպտեմբերի 17-ին:

ՖՈՒՏԲՈԼ

Դասաեւի հրաժեշտի խաղերը

Նախատեսվում է, որ Մոսկվայի «Սպարտակ» թիմի եւ Խորհրդային Միության հավաքականի հանրահայտ դարպասապահ Ռինատ Դասաեւի հրաժեշտի խաղերը կանցկացվեն սեպտեմբերի 23-ին եւ 26-ին:

Դասաեւը, որը շուրջ 10 տարի գտնվում էր Իսպանիայում, մի քանի ամիս առաջ է վերադարձել Ռուսաստան: Դարպասապահի կարիերան Իսպանիայում փաստորեն չստացվեց: Իսկ վերջին շրջանում Դասաեւը զբաղվում էր բիզնեսով, որտեղ նույնպես հաջողություն չունեցավ: Չախողվեց նաեւ նրա անձնական կյանքը, հետեւեցին ընտանեկան գժտությունները: Ռինատին համոզեցին վերադառնալ նրա եղբայրը եւ ընկերները: Այժմ Դասաեւը Մոսկվայի «Սպարտակում» պարապում է դարպասապահների հետ:

Հրաժեշտի խաղերում կհանդիպեն «աստղերի» հավաքականը եւ Ռուսաստանի ակումբների հավաքականը: «Աստղերը» հանդես կգան ԽՍՀՄ-ի հավաքականի մարզահագուստով, այդ թիմի մարզիչը Նիկիտա Սիմոնյանն է: Նրանց մրցակիցների մարզիչը Վլադիմիր Սալկովն է:

Խաղերից առաջինը տեղի կունենա Մոսկվայում, երկրորդը՝ Աստրախանում, որտեղ իր ֆուտբոլային առաջին քայլերն է արել, որտեղ «Վոլգար» թիմի կազմում հանդես է եկել Ռինատ Դասաեւը:

Նոր մարզիչներ հավաքականներում

Հայտնի է դարձել, որ վերջերս Գերմանիայի հավաքականի հրաժարական տված գլխավոր մարզիչ Բերտի Ֆոգտսին փոխարինելու է 61-ամյա Էրիխ Ռիբբեկը: Նա վերջին տարիներին մարզել է «Բավարիա», «Բայեր», «Կայզերսլաուտերն» թիմերը, որոնք նրա ղեկավարությամբ նկատելի հաջողությունների են հասել: Հավաքականի ղեկը ստանձնելու առիթով Ռիբբեկին ողջունել է նաեւ ԳԴՀ-ի կանցլեր Հելմուտ Քոլը, հույս հայտնելով, որ Գերմանիային նոր հաղթանակներ են սպասում:

Բուլղարիայի հավաքականի գլխավոր մարզիչ Խրիստո Բոնեւին, որը պատասխանին հրաժեշտ տվեց, երբ Եվրոպայի առաջնության ընտրական խաղում իր թիմը սեփական հարկի տակ 0-3 հաշվով պարտություն կրեց Լեհաստանի հավաքականից, փոխարինել է Դիմիտար Դիմիտրովը:

Դիմիտրովը վերջին շրջանում մարզում էր երկրի չեմպիոն «Լիտեքս» (Լովեչ) թիմին, որը «այրի ընկավ» Չեմպիոնների լիգայում Մոսկվայի «Սպարտակից» կրած ջախջախիչ պարտություններով: Լրագրողները նշում են, որ Դիմիտրովն իր թիմի հանդիպումների ժամանակ չափազանց բուռն է արձագանքում խաղադաշտում ընթացող իրադարձություններին:

ՄԱՐԶԱԿԱՆ

Վերջին մրցաշարը

Նյու Յորքում ավարտվեց «Մեծ սաղավարտ» շարքի վերջին եւ ամենահարուստ մրցաշարը՝ ԱՄՆ-ի բաց առաջնությունը (այստեղ մրցանակային հիմնադրամը 14 մլն դոլար է):

Երկրորդ տարին անընդմեջ չեմպիոնի կոչումը նվաճեց ավստրալացի Պատրիկ Ռաֆթերը: Կիսաեզրափակիչում նա հաղթեց աշխարհի թիվ մեկ թենիսիստ Փիթ Սամփրասին (ԱՄՆ)՝ 6-7, 6-4, 2-6, 6-4, 6-3: Սակայն հանուն արդարության նշենք, որ 3-րդ մրցափուլից հետո Սամփրասը ոտքի վնասվածք ստացավ ու չկարողացավ լրիվ ուժով խաղալ: Վճռական խաղում Ռաֆթերը հանդիպեց իր երիտասարդ համերկրացի Մարկ Ֆիլիպուսիսի հետ: Թենիսի գիտակները պարզեցին, որ ԱՄՆ-ի բաց առաջնության եզրափակիչում երկու ավստրալացիներ վերջին անգամ մրցել են 1970 թվականին (այդ տարի Քեն Ռոզուոլը հաղթեց Տոնի Ռոչին): Առաջին մրցափուլում հաղթեց Ռաֆթերը, երկրորդում՝ Ֆիլիպուսիսը: Երկու դեպքում էլ 6-3 հաշիվ գրանցվեց: Սակայն հաջորդ երկուսում ավելի փորձառու Ռաֆթերի առավելությունն ակնհայտ էր (6-2, 6-0): Այսպիսով, նա շահեց գլխավոր մրցանակը եւ 700 հազար դոլար վաստակեց: Սա Ռաֆթերի շահած 6-րդ մրցաշարն է 1998-ի ընթացքում:

Կանանց մրցաշարի եզրափակիչում հանդիպեցին աշխարհի առաջին եւ երկրորդ թենիսիստուհիներ Մարտինա Հինգիսը (Շվեյցարիա) եւ Լինդսեյ Դեւենպորտը (ԱՄՆ): Այս անգամ ուժեղ գտնվեց Դեւենպորտը: Օլիմպիական չեմպիոնուհին հաղթեց 6-3, 7-5 հաշվով: Նա եւս 700 հազար դոլար պարգեւավճար ստացավ:

Ընդամենայնիվ, Հինգիսը հաղթեց Դեւենպորտին զուգախաղերում: Հինգիսը իր եւ Յանա Նովոտնան (Չեխիա) եզրափակիչում պարտության մատնեցին Դեւենպորտին եւ Նատալյա Զվերեւային (Բելառուս) 6-3, 6-3:

Լինդսեյ Դեւենպորտ

Հերթական ռեյտինգ-ցուցակը

Հրապարակվել է աշխարհի ուժեղագույն թենիսիստ-թենիսիստուհիների հերթական դասակարգման ցուցակը:

Ներկայացնում ենք առաջին վեց լավագույններին եւ նրանց միավորները:

Տղամարդիկ

1(1). Փիթ Սամփրաս (ԱՄՆ)՝ 4015, 2(3). Պատրիկ Ռաֆթեր (Ավստրալիա)՝ 3575, 3(2). Մարսելո Ռիոս (Չիլի)՝ 3467, 4(4). Պետր Կորդա (Չեխիա)՝ 2908, 5(10). Կառլոս Մոյա (Իսպանիա)՝ 2850, 6(9). Կարոլ Կուչերա (Սլովակիա)՝ 2732:

Կանայք

1(1). Մարտինա Հինգիս (Շվեյցարիա)՝ 5616, 2(2). Լինդսեյ Դեւենպորտ՝ 5470, 3(3). Յանա Նովոտնա (Չեխիա)՝ 5063, 4(4). Արանչա Սանչես-Վիկարիո (Իսպանիա)՝ 3698, 5(5). Վենուս Ուիլյամս (ԱՄՆ)՝ 3015, 6(6). Սոնիկա Սելես (ԱՄՆ)՝ 2851:

ՖՈՐՄՈՒԼԱ-1

Երկիրխանություն աշխարհի առաջնությունում

Միլանից 15 կմ հյուսիս-արեւելք գտնվող Մոնց քաղաքում անցկացվեց «Ֆորմուլա-1» դասի ավտոմեքենաների աշխարհի առաջնության 14-րդ փուլը՝ Իտալիայի Մեծ մրցանակի խաղարկությունը:

Կրկին բոլորի ուշադրության կենտրոնում էր «Ֆերրարի» թիմի առաջատար, գերմանացի Միխայել Շումախերի մրցակցությունը «Մակլարեն-Մերսեդեսի» երկյակի՝ ֆինն Միկա Հակկինենի եւ շոտլանդացի Դեւիդ Կուլտհարդի հետ:

Շումախերը գլխավորեց վազքը, բայց շուտով ետ մնաց հիմնական մրցակիցներից: 17-րդ շրջանում մեքենայի շարժիչի խափանվելու պատճառով պայքարից դուրս մնաց Կուլտհարդը: Մեծ ջանքերի գնով Շումախերը կարողացավ բոլորից առաջ անցնել եւ հաղթել այս փուլում: Նրա հաջողությունը մեծ ուրախություն պատճառեց Մոնց քաղաքի մրցարշավարանի տրիբունաներում հավաքված ավելի քան 100 հազար մարզասերներին: Երկրորդ տեղը գրավեց նույնպես «Ֆերրարի» թիմի անդամ, իտալացի էդդի Իրվայնը, իսկ երրորդը «Ջորդանի» ներկայացուցիչ Ռալֆ Շումախերն էր՝ Միխայելի եղբայրը: Հակկինենը միայն 4-րդ տեղը գրավեց:

Այսպիսով, 14 փուլից հետո առաջին-երկրորդ տեղերում են Միխայել Շումախերը եւ Միկա Հակկինենը, որոնք 80-ական միավոր ունեն:

Այժմ ամեն ինչ կվճռեն առաջնության վերջին երկու փուլերը, որոնք կանցկացվեն Լյուքսեմբուրգում եւ Ճապոնիայում:

ԹԵՆԻՍ

Աշխարհի գավաթի խաղարկությունը

Հարավաֆրիկյան Հանրապետության Յոհաննեսբուրգ քաղաքում ավարտվեց աշխարհի գավաթի 8-րդ խաղարկությունը: Դրան մասնակցեցին տղամարդկանց եւ կանանց 8-ական թիմեր՝ 5 աշխարհամասերի եւ ուժեղագույն 3 երկրների հավաքականներ:

Թիմային պայքարում մրցանակային տեղերը բաշխվեցին հետեւյալ կերպ. տղամարդիկ՝ 1. Աֆրիկա, 2. Եվրոպա, 3. Գերմանիա, կանայք՝ 1. ԱՄՆ, 2. Եվրոպա, 3. Աֆրիկա:

Տղամարդկանց մրցապայքարում Աֆրիկային առաջին տեղ բերեց փաստորեն Նամիբիացի Ֆրենկի Ֆրեդերիքսի հաղթանակը 200 մ վազքատարածությունում (19,98 վրկ): Նշենք նաեւ երկու ուժեղագույն բարձրացատկորդների՝ ամերիկացի Չայլզ Օսթինի եւ կուբացի Խավիեր Սոտոմայորի մրցակցությունը: 2 մ 31 սմ պրդյունքով հաղթեց Օսթինը: Անակնկալ գրանցվեց 110 մ արգելավազքում: Այստեղ շատերի համար անսպասելիորեն հաղթեց Ֆալկ Բալցը (Գերմանիա), որը ցույց տվեց 13,10 վայրկյան արդյունք: Նա ընդամենը 0,01 վայրկյանով գերազանցեց աշխարհի ռեկորդակիր Քոլին Ջեկսոնին: Չորրորդ հատվածում հաղթեց ռուս Մաքսիմ Տարասովը, որը հանդես էր գալիս Եվրոպայի հավաքականի կազմում: Նա հաղթահարեց 5 մ 85 սմ բարձրություն:

ԱՄՆ-ի կանայք թիմային հաղթանակը տարան շնորհիվ վազքային մրցաձեւերում ունեցած հաջողության: Երկու հաղթանակ տարավ աշխարհի չեմպիոնուհի Մերիոն Ջոնսը, որն առաջինն ավարտեց 100 եւ 200 մ վազքատարածությունները: Ի դեմ, նա բավականին բարձր արդյունքներ ցույց տվեց: Ջոնսոնը փորձեց հաղթել նաեւ հեռացատկի մրցումներում, սակայն 7 մ արդյունքով նա միայն երկրորդն էր: Հաղթեց գերմանուհի Հայկե Դրեքսլերը (7 մ 07 սմ): Սա մրցաշրջանում Մերիոն Ջոնսի առաջին պարտությունն էր: Մինչ այդ նա 38 անընդմեջ հաղթանակ էր տարել: Նշենք նաեւ օլիմպիական կրկնակի չեմպիոնուհի Ավետլանա Մաստերկովայի (Ռուսաստան) հերթական հաղթանակը 1500 մ վազքատարածությունում:

4x400 մ փոխանցումավազքում մրցանակակիրները տեղեր գրավեցին հետեւյալ հերթականությամբ՝ Գերմանիա, ԱՄՆ, Ռուսաստան:

Մերիոն Ջոնս

ԲԱԾԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱԶՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ՔԵՊԱԶՐՈՒՅՑ

Կասյա Աբգարյանը հաստատում է, հերքում, հակասում

Հաստատված ավանդույթի համաձայն, նախագահի մամլո քարտուղար տկն Կասյա Աբգարյանը երեկվա ճեպազրույցում լրագրողներիս ծանոթացրեց Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ընթացիկ շաբաթվա աշխատանքային օրացույցին: Ըստ դրա, նախագահը երեկ ընդունելու էր ՌՊ արտակարգ իրավիճակների նախարար Սերգեյ Շոյգուին, այսօր այցելելու է Նորք-Մարաշ բժշկական կենտրոն, ամենայն հավանականությամբ այսօր հանդիպելու է նաեւ սեպտեմբերի 15-17-ը տարածաշրջան ժամանած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Գոնալդ Կայզերին, Ժորժ Վոժիեին եւ Յուրի Յուկալովին, սեպտեմբերի 17-ին ընդունելու է ԱՊՀ սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի Երեւանում կայանալիք 31-րդ նիստի մասնակիցներին, սեպտեմբերի 18-ին մեր նախագահին իր հավատարմագրերն է հանձնելու Չինաստանի դեսպան Չժու Չժաոնը, իսկ արդեն սեպտեմբերի 19-ին Ռոբերտ Քոչարյանն այցելելու է Սիսիան Ռոստոմի թունելի շինարարական աշխատանքների ընթացքին ծանոթանալու:

Տկն Կասյան այնուհետեւ տեղեկացրեց, որ «երեկ նախագահ Քոչարյանը շնորհավորական նամակ ուղարկեց Պրիմակովին: Նամակի մեջ հայտնեց վստահություն, որ Պրիմակովի ակտիվ մասնակցությամբ կզարգանան եւ կամրապնդվեն Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ իսկական գործընկերությունը եւ բարեկամության ավանդույթները»: Լրագրողներիս նախազգուշացնելով, որ «հաջորդ երկու շաբաթվա ընթացքում ճեպազրույցներ չենք անելու», քանի որ նախագահ Քոչարյանը, գլխավորելով Հայաստանի պատվիրակությունը, մեկնելու է ԱՄՆ՝ մասնակցելու ՍԱԿ-ի նստաշրջանին, ուր ելույթ է ունենալու, Քրիս Քրիստոֆերսոնի հրավերով լինելու է նաեւ Լոս Անջելեսում, հանդիպելու է հայ համայնքին, մասնակցելու է պատարագի եւ այլն, որի մասին ժամանակին տեղեկատվություն կունենանք, տկն Կասյա Աբգարյանը այնուհետեւ պատասխանեց մեզ հետաքրքրող բազմաթիվ հարցերին: Մասնավորապես նա ճշգրտեց, որ ԱՄՆ մեկնող պատվիրակության կազմում լինելու է նաեւ առաջին տիկինը Բելա Քոչարյանը, «որն, ինչպես գիտեք, բժիշկ է, բայց չի աշխատում», նախագահին ուղեկցելու է նաեւ ինքը:

Ելնելով նախագահի աշխատանքային օրացույցի մեջ նշված ՍՊՀ նախանախագահի զորքերի հրամանատարների հանդիպման նիստ-ասուլիսի տեղեկատվությունից, փորձեցի ճշտել, թե որքանով են հավաստի այն լուրերը, ըստ որոնց ռուսական կողմը մտադիր է հայ-թուրքական սահմանից հանել իր սահմանապահներին: Տկն Կասյան «Ազգի» այս հարցին բառացիորեն պատասխանեց. «Այդպիսի ստույգ ինֆորմացիա մենք չունենք եւ ոչ մի համապատասխան մեկնաբանություններ չենք կրնար տալ»:

Ժպտալով հավաստելով, թե նախագահի աշխատանքային օրացույցը «այսօրվա վիճակով ամբողջական է», մամլո քարտուղարը փաստացի հերքեց լրագրողներից մեկի այն հարցադրումը, ըստ որի աշխատակազմը եւ անձամբ ինքը տկն Կասյան, խստականություն է դնում պատճառական եւ ոչ պատճառական մամուլի միջեւ, առաջիններին համար «պահելով» մի քանի «անուշիկ» տեղեկատվություն: Նույն կերպ տկն Կասյան արձագանքեց նաեւ իբր թե նախագահի աշխատակազմում «թխվող» լուրերի մասին հարցադրմանը, մասնավորապես, նախկին մի խումբ բարձրաստիճան իշխանավորների «ժողովի» վերաբերյալ, դարձյալ ժպտերես հավաստելով, թե Հայաստանը ժողովրդավարական երկիր է եւ եթե ոմանք ինչ-որ տեղ հավաքվել էլ են, ապա դա իրենց գործն է եւ իրենք ազատ էին այդպես վարվելու:

Չափազանց հետաքրքիր էր վարչապետի եւ մի քանի նախարարների ակնկալվելիք պատասխանատվության մասին մամուլ թափանցած լուրերի առթիվ տկն Կասյայի տված պարզաբանումը. «Ինչ վերաբերում է կադրային փոփոխություններին, վարչապետի հետ կապված լուրը բացարձակապես սուտ է, իսկ կադրային փոփոխություններ մշտապես են լինում, [illegible] հիմնականում բերդ չկա, [illegible] բնական աշխատանքային գործընթաց է»: Սրանից կարելի է մակաբերել, որ կառավարության կազմում մի քանի առանցքային նախարարների փոփոխությունը եթե տկն Կասյան նույնիսկ չհաստատեց, ապա նաեւ չժխտեց:

Առավել հետաքրքրություն ներկայացնող հարցերից էր նաեւ այն, թե նախագահը չի՞ խախտում, արդյոք, երկրի Սահմանադրությունը՝ խուսափելով ԱԺ պատգամավորների մեկ երրորդի պահանջով արտահերթ նստաշրջան գումարել Կոնյակի գործարանի սեփականաշնորհման առթիվ: Տկն Կասյան նկատեց. «Սահմանադրական խախտումի հարց չկա, գիտե՞ք, ըստ Սահմանադրության եւ Ազգային ժողովի կանոնակարգով հստակեցված չէ՝ երբ պետք է նախագահը հրավիրի արտակարգ նստաշրջան... Նախագահը դեռ մտածում է, թե ե՞րբ կհրավիրի նստաշրջան»: Ինչպես ինքը նկատեց, տվյալ պարագայում մամլո քարտուղարը հանդես է գալիս նախագահի կարծիքը լրագրողներին փոխանցողի դերում, եւ պետք է ենթադրել, որ տկն Կասյան անձամբ չէր հավակնում Սահմանադրությունը կամ ԱԺ կանոնակարգը մեկնաբանողի դերին:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼ

«Նյու Յորք թայմսը» ղարաբաղյան հակամարտության մասին

ԵՐԵՎԱՆ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: Ղարաբաղում պատերազմական գործողությունների վերսկսումը կարող է կործանարար լինել, քանի որ Կովկասում այժմ հաստատված է զարգացման ու խաղաղ բավական նուրբ հավասարակշռություն: Այս կարծիքն է հայտնվում «Նյու Յորք թայմսի» սեպտեմբերի 14-ի համարում: Հոդվածում նշվում է, որ հակամարտության հանգուցալուծման ուղղությամբ դեռեւս էական տեղաշարժ չկա, իսկ նախագահ Քոչարյանը հետամուտ է ոչ սանդարտ մոտեցումներով յուրահատուկ լուծում փնտրելուն՝ Հյուսիսային Իռլանդիայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Նոր Կալեդոնիայի կամ էլ Անդորրայի հավանական մոդելներով:

Ըստ թերթի, Քոչարյանը Ղարաբաղի հետագա ճակատագրում Ադրբեջանին վերապահում է զուտ խորհրդանշական դեր, այնքան, որքան հարկ է Բաքվի վարկը պահելու համար: Շմեկնաբանելով Քոչարյանի «ինդումները՝ թերթը մեջ բերում է նրա կարծիքն այն տեսակետի վերաբերյալ, թե նավթային գործոնը առաջիկա տասնամյակում այնքան կհարստացնի Ադրբեջանին, որ նա կկարողանա ուժով ետ վերցնել Ղարաբաղը: «Կարծում եմ, թե հարուստ մարդիկ ավելի լա՞վ են պատերազմում: 10 տարում ո՞վ պատրաստ կլինի կռվելու, զոհվելու եւ ինչո՞ւ: Ղարաբաղցիները 10 տարի հետո էլ կկռվեն իրենց հայրենիքի համար, իսկ ադրբեջանցի զինվորների համար այդ ժամանակ Ղարաբաղը սոսկ հուշ կլինի: Ուրեմն, ո՞վ ավելի պատրաստ կլինի իր կյանքը զոհաբերել», ասել է Քոչարյանը:

Հոդվածում հատուկ անդրադարձ կա կասպյան նավթի պաշարների խնդրին, այն շեշտադրմամբ, որ նավթային ակնկալվող բումը կարող է դերեւ լինել ղարաբաղյան թնջուկի տիպի տարածաշրջանային հակամարտությունների պատճառով:

Թուրք մամուլ. Կիպրոսի նախագահի այցը՝ «չարամիտ զորակցություն»

ՍՏԱՄԲՈՒԼ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքական թերթերից երկուսն անդրադարձել են Կիպրոսի արտգործնախարար Հայաստան կատարած այցին եւ այն որակել որպես «չարամիտ նպատակներով զորակցություն»:

Մասնավորապես «Ռադիկալ» թերթը, մանրամասնորեն անդրադառնալով այս իրադարձությանը, ծանրացել է Կասուլիդես-Օսկանյան հանդիպման վրա, որի ընթացքում ստորագրվել են չորս համաձայնություններ: Կասուլիդեսը հայտնել է, որ վառելիքի ու համակարգչային ոլորտներում էլ է համագործակցություն հաստատվելու եւ հայ ուսանողները կկարողանան ուսում ստանալ Կիպրոսի հունական հատվածի կրթօջախներում: Ըստ Օսկանյանի, այդ համաձայնությունները երկու երկրների համագործակցության նոր էջ կկազմեն: Նա ասել է նաեւ, որ երկու կողմերն ընդհանուր շահեր ունեն եւ հարաբերությունները միայն բարեկամական չեն, այլեւ եղբայրական: Թերթը գրում է, որ Կասուլիդեսն իր հերթին ասել է, թե Կիպրոսը նեցուկ է կանգնելու Հայաստանի կողմից ՄԱԿ-ին ու ԵԱՀԿ-ին առաջարկված «Հայոց ցեղասպանության» բանաձեւին: Նա ասել է նաեւ, թե երեւանում գտնվող ցեղասպանության զոհերի հուշարձանից մեծ տպավորություն է ստացել եւ որ երկու ժողովուրդների պատմական ճակատագիրը միմյանց հետ ընդհանրություններ ունեն: Օսկանյանն ասել է, թե Թուրքիան Կիպրոսի ու Ղարաբաղի հարցերում առաջնորդվում է երկակի ստանդարտներով եւ որ երկու երկրները միասնաբար միջազգային ասպարեզում պետք է մերկացնեն Թուրքիայի այդ կեցվածքը:

Ըստ «Ռադիկալի», հայ-հունական «այս մերձեցմանը կհաջորդի Միրիա-Հայաստան մերձեցումը եւ արդեն կարելի է ասել, պատվիրակություն է մեկնել Երեւան՝ պատշաճական շփումների համար»:

Հայկական ժողովրդային շարժման Հայաստանի ներկայացուցչությունը

ՀՐԱՎԻՐՈՒՄ Է՝ ՁԵԶ

ներկա գտնվելու նորագույն զինյալ ազատագրական պայքարի ռահվիրա Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի եւ Հայկական ժողովրդային շարժման նահատակներին նվիրված երաժշտական միջոցառմանը, որը տեղի կունենա Երեւանի կամերային երաժշտության տանը, սեպտեմբերի 19-ին, ժամը 18-ին:

Հասցեն՝ Իսահակյան 1

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

արտատիմանյան արտադրության օֆսեթ թուղթ,
խտությունը՝ 70 գ/մ², գինը՝ 1 կգ - 750 դրամ:
5 տ-ից ավելի գնելու դեպքում՝ 650 դրամ, այդ թվում ԱԱՀ-ը:
Վաճառվող թուղթը կարող է կտրատվել գնորդի կողմից պահանջվող չափերով:
Հասցեն՝ «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ, Արշակունյաց-2:
Հեռ. 52-70-56, 52-73-69, 52-06-46, 52-70-49 ՏԵՍՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ

Օրաթերթը զեղչ գներով կարող եք բաժանորդագրվել Հայմամուլի գրասենյակներում կամ Հայփոստի բաժանմունքներում:

ԶԵՂՉ ԳՆԵՐՈՎ

Վեցամսյա բաժանորդագրություն՝
~~12600~~ 9000 դր.

Եռամսյա բաժանորդագրություն՝
~~6300~~ 5000 դր.

Ամսական բաժանորդագրություն՝
~~2100~~ 2000 դր.

Հեռուստացրույցներ

16 սեպտեմբեր

17.00 Լուրեր
17.20 Մուլտֆիլմեր «Ընկերները», «Կախարդական թռչունը», «Անծրեւային շունը»
18.00 Հեռուստասերիալ «Դալլաս»
19.00 Գոլդն շանս
19.35 36.6
20.00 Լուրեր
20.40 Հեռուստակասլոգ
20.45 Լեզվաբխարհ
21.00 Ազգային ժողովի նիստում հարցեր կառավարությանը
22.30 «02»
23.00 Չկրկնված երգ. Ֆրունզե Ելանյանի եւ Լյուդմիլա Սեմանովայի հոբելյանական երեկոն
23.30 3-րդ խաղակես
24.00 Լուրեր
00.15 Հեռուստասերիալ «Բնության հարսնացուն»

ՆՈՐՔ
19.05 Մուլտֆիլմ
19.15 Միասին («Միր»)
20.00 Լուրեր
20.30 Լուս-ա-մուք
20.35 «Բերդ» պարի անսամբլի երգերը
20.55 Սերիալ «Մարլեզոն» (2-րդ մաս)
21.35 Եղանակի տեսություն
21.40 Աստղերը հուշում են
21.45 Կրթօջախ
22.10 Կինոկասակերգություն. գեղֆիլմ «Ամեն ինչ փոխադարձ է»
23.55 Սիրեցեք զմիմեանս
00.00 Լուրեր

19.05 Մամուլի սուրհանդակ
19.15, 24.00 Հրապարակ
19.25 Մուլտեր
19.40 Մի անգամ
20.00 Կամ... Կամ. Վահան Հովհաննիսյանի եւ Դավիթ Շահնազարյանի բանավեճը ուղիղ եթերում
(20.55 Սուրհանդակ)
21.15 «Բլեք սաբաթ» խմբի համերգը
22.00 Մամուլի սուրհանդակ
22.10 Ուշացած հանդիպումներ
22.45 Գ/Ֆ «Եռակի դավաճանություն»
(22.55, 00.55 Սուրհանդակ)
01.15 Գիշերային կինոսրահ. «Նմանաժը»
02.25 Սուրհանդակ

7.00 Բարի լույս
10.00, 16.00, 19.00, 01.45 Նորություններ
10.15 «Սուլթանի գերուհի Ռոքսոլանան»
11.30-15.45 Բիզնես TV
16.20 Մուլտսերիալ «Տին-Տինը գնում է հետքերով»
16.45 Հրաշալի ընկերակցություն
17.15 Ջունգլիների կանչը
17.40 Սերիալ «Սինդբադի նոր արկածները»
18.10 Մինչեւ 16 տարեկան եւ ավելի
18.30 Աշխարհի շուրջը
19.20 «Սուլթանի գերուհի Ռոքսոլանան»
20.05 Պիկ ժամ
20.30 Ռոկու տենդ
21.10 Մարդը եւ օրենքը
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.40 Գ/Ֆ «Արեւ ուրացողը»
01.00 Վավ. դետեկտիվ «Սպանություն մենաստանում»
02.00 Դետեկտիվ «ԲԱՁԱ-2»

8.00 Բարի լույս, Ռուսաստան
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 «Ստոնգը» ներկայացնում է
11.50 Ի գիտություն
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
12.30 Գ/Ֆ «Գնյուն»
13.50 Հին բնակարան. 1965 թիվ (1-ին մաս)
15.35 Գ/Ֆ «Դատարկաքանը»
17.15 «Զանգահարեք Կուզային»
17.30 Հեռուստասերիալ «Առաջին համբույրներ»
18.30 Աշխարհ
19.00 Ուղեւորություն-մրցամարտ
19.30 Հեռուստասերիալ «Մայրեր, կանայք եւ սիրուհիներ»
20.30 Սերիալ «Կեղտոտ գործեր»
21.30 Մանրամասներ
21.45 Երաժշտական զվարճալի ծրագիր «Երկու դաշնամուր»
22.30 Կինոյի ժամ. Գ/Ֆ «Ոստրեներ Լոզանից»
00.00 Հեռուստասերիալ «Ագաթա Քրիստի Պուարո»
01.30 Ցեմ տասնյակ

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՅՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581331) • տեղեկագրքերով • մագնիսական սկավառակներով • INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիլ 69149. Պատվեր 905 Տպաքանակը 4000 Ստորագրված է տպագրության 15.09.1998 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@